

Վ. ՀԱՄԱԶԱՍՊԹԱՆ

ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ԶՈՐԱՎԱՐ ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ*)

«Երբ աչ ոսիս էի հեմվում
աչ լեռն էի գեցնիմ հավասարեցնում,
Իսկ երբ ձախ ոսիս վրա էի հեմվում,
ձախ լեռն էի գեցնիմ հավասարեցնում»

Զորորդ դարի երկրորդ կիսում, հայոց Արշակ II թագավորի և Ներսես I Մեծի հետ միասին, հայկական պետականության ամբողջական, Հայաստանի անկախության պահպանման, կուլտուր-լուսավորական մի շարք բարենորոգումների, շինարարական ձեռնարկումների և առանձնապես հայկական ուժեղ բանակի կազմակերպման գործում իր պատվավոր տեղն է զբաղում ժամանակի մեծ գործարար, Մամիկոնյանների տան փայլուն ներկայացուցիչ, տաղանդավոր սպարապետ Վասակ Մամիկոնյանը:

Մոտ հազար վեց հարյուր տարի է անցել կարճահասակ հսկայի ժամանակներից, բայց դարերի խորքից դեռ մեծ թարմությամբ լավում է Հայկական դնդերին դեպի մարտը կանչող նրա խրոխտ, առնական ձայնը, և երևում են օտար նվաճողների դեմ նրա կատարած սխրագործություններն ու դյուցազնական գործերը:

Վասակ Մամիկոնյանը հեռացել էր Տիրան թագավորի պալատից, կարվել հայոց աշխարհի քաղաքական կյանքից և փակվել հայրենի Տայոց լեռնաշխարհում, երբ նրան արքունիք է հրավիրում և հայոց զորքերի սպարապետությունը հանձնում Արշակ II թագավորը:

Տաղանդաւոր գործարարը, որ դայակն էր եղել Արշակի և երկար տարիներ սիրել, փայփայել ու դաստիարակել էր նրան, չի մերժում իր սիրելի պատանու առաջարկը

և մեծ սիրով ընդունում է սպարապետությունը:

Վասակը Մամիկոնյանների տոհմի ամենաականավոր ներկայացուցիչն էր և ժամանակի մեծ գործարար. նրա կարճահասակ, բայց ամուր իրանում մարմնացած էին քաջության, անվնեւեղության, խիզախության, անձնագործության բոլոր հատկությունները:

«Առյուծասիրտ, քաջ, երկաթաբաղուկ, աներկյուղ, քաջանուն, բարձրահամբավ և հմուտ իր գործին», — այսպես էր հայտնի տաղանդավոր գործարարն իր ժամանակի բոլոր մեծ ու փոքր մարդկանց, հայերին ու հարևան ժողովուրդներին, բարեկամներին ու թշնամիներին:

Նրա համբավը հասել էր շատ ու շատ հեռավոր երկրներ: Նրա զենքի ուժը տեսել էին օտարների շատ հրոսակախմբեր և նրա սրի տակ ծունկի էին եկել կամ իրենց գլուխը դրել շատ անվանի գործարարներ: Նա պատկանում էր հայ գործարարների այն պլեադային, որոնք իրենց ողջ կյանքը անց էին կացրել հայրենիքի, ժողովրդի անկախության համար մղած հաղթական պատերազմներում, որոնք հաճախ փոքրիկ, բայց միասնական, միաձուլվ, հաղթության մեծ հավատով տողորված գործախմբերով նետվել էին գերազանց ուժերով հարձակվող թշնամու բանակների վրա, ջախջախել և խաչատուակ պարտության մատնել նրանց:

Նա արժին էր հայոց լեռներին, և այդ

*) Ըսկ. Վ. Համազասպյանի այս աշխատությունը դեռևս գտնվում է ժողովածուում — որպես Վասակ Մամիկոնյանի կյանքի և գործունեության հանրամատչելի նկարագիր:

համարձակ արժիքն Արշակ II առաջարկում է հայոց լեռնաշխարհի ամենից բարձր գագաթը, որպեսզի նա կարողանա այնտեղից հսկել, տիրություն տնել հայ աշխարհի սահմաններին և ապահովել հայ ժողովրդի խաղաղ կյանքը:

Վասակ Մամիկոնյանը ծնվել է չորրորդ դարի սկզբներին (309—311 թ. թ.) Տայոց գաւառի էրախանի բերդ-դղակում: Փոքրիկ, բայց աշխուժ, չարճճի Վասակը Վաչե սպարապետի կնոջ՝ իր տատիկի, միակ սիրելի թոռնիկն էր:—Նա հաճախ տատիկից լսում էր հեռաքրքիր պատմություններ հայ դուքսագնձերի, թագավորների և զորավարների սխրագործությունների ու նրանց դուքսագնական գործերի մասին:

Հաճախ նա ստիպում էր տատիկին կրկնել Հայկի ու Բելի, «Տոբ անգեղի» պատմությունները, որոնցից առաջինն՝ իր անկախ ոգով, իսկ եկրորդը՝ իր քաջությամբ ու ուժով շատ էին դուր եկել նրան:

Վասակը մանուկ հասակից ստանում է զինվորական դաստիարակություն: Նրա պապը՝ Վաչե սպարապետը և Արտավազդը, անձամբ դրադվում էին Վասակի դաստիարակությամբ:

Փոքրիկ Վասակի մեջ նրանք դեռ նրա մանկության շրջանում տեսնում էին այն ամենը—ուժ, համարձակություն, ճարպկություն, ինքնուրույնություն,—որոնք հարկավոր էին հայոց ապագա սպարապետին և աշխատում էին նրա դաստիարակությունը տանել այն ուղղությամբ, որպեսզի Վասակը կարող ուժ լինի Մամիկոնյանների տոհմին ժառանգաբար անցնող սպարապետության պաշտոնի համար:

Կարճահասակ, բայց ուժի և կորովի տեր Վասակը դեռ պատանի հասակից սկսում է փայլել ընկերական շրջանում խելացի դատողությամբ, կազմակերպչական շնորհքով, նետաձգության, սրամարտության, վազքի, թռիչքի, պարսպանդախաղի մեջ: Ընկերների կողմից սովորաբար նա էր ղեկավար ընտրվում, երբ խաղեր և մանկական արշավանքներ էին կազմակերպվում Դաստակերտում և նա մեծ շնորհ էր ցուցաբերում ամբողջ խաղի կամ արշավանքի ժամանակ:

Վասակն իր մանկությունն ու պատանեկությունը անց է կացնում հայրենի լեռնաշխարհում: Նա անուն սիրով սիրում էր իր հարազատ երկիրը, նրա բարձր լեռները մերկ ու պիրկ սեպանե գագաթներով, խոր ու ոլորուն ձորերը՝ անելի ու սարսափ տարածող մեծ-մեծ ժայռերով, հայրենի երկրի գետերն իրենց վտակներով, թավուտ անտառները մեծ ու փոքր բացատներով, շրջանաձև պար բնած սարերն՝ իրար սեղմված սարահարթերով, աղբյուրներն՝ իրենց պաղ ու զուլալ ջրերով, սարահարթերից վազող առվակները՝ մեղմ խոխոջյունով, լայնածավալ դաշտերը, արոտներն ու մարգագետինները, տանձի, խնձորի, թզի այգիները, գեղեցիկ պարտեզները, լեռներում, ձորերում, դաշտերում ու անտառներում աշխատող հայ շինականին, նրա երկրի սահմաններում վեր խոյացող բերդերի պարիսպներում պահապան կանգնած քաջ զինվորներին, լեռներից ու բարձունքներից փունջ կազմած հեքյաթային հայոց աշխարհի ամբողջ ժողովրդին:

Նա սիրում էր լեռնցու պարը, դաշտացու հորովելը, հովվի սրինգը, աղատություն ու ըմբոստություն ներշնչող հայկական ազգանքերը:

Փոքր հասակից նա շատ էր լսել անավոր ու սարսափելի պատմություններ՝ այդ գեղեցիկ աշխարհում դարեր շարունակ առատությամբ հոսած արյան գետերի մասին: Իրսի թշնամիները՝ թալանչի հռոմեացիների ավազակային լեզեոնները, նրանց կատարած հարձակումների, ավերածությունների, դադանությունների, Լուկուլլոսի, Պոմպեոսի, Կրասոսի, Հուսի այդ սյուների արշավանքների, Տիգրան մեծի ու Միհրդատ Պոնտացու կազմակերպած դիմադրության, հաջող պարտիզանական կռիվների, և Հայ Արտավազ թագավորի կազմակերպած թառերահանդեսի մասին, երբ Յասոփը՝ դեն զնկով Պենթեոսի դիմակը, խլում է ռազմագաշտից նոր բերած հռոմեական գոռ զորավար Կրասոսի գլուխը, և արտասանում

Մենք բերում ենք լեռներից
Մեր տունը՝ նոր սղանած
Գաղանը, բախտավոր մի որս:

«Կրասոսի նման պետք է գլխատվեր նաև շուն Անտոնիոսը, հաճախ զրույցի ժամանակ սեղմելով բռունցքը՝ բացականչում էր Վասակը, այն Անտոնիոսը, որը խայտառակփած արևելյան արշավանքից, խարեությամբ և ստոր միջոցներով, սրիկայաբար իր մոտ կանչելով Արտավազդին, կալանավորում է նրան և լիտիաբար, որպես հաղթանակի ապացույց՝ ընծայում է իր սիրելի Կլեոպատրային»:

«Հռոմեական և պարսկական բոլոր դորավարներն ու կայսրները խաբեբաներ, թալանչիներ, գաղաններ ու ավազակներ են» ասում էր իր ընկերներին Վասակը:

«Արշավանքներ, ավերածություններ, գաղանություններ ու արշունհաղություններ— սրանք են եղել հռոմեական և պարսկական բարբարոս զորաբանակների դարերի գործը: Այդ գաղաններն ու մարդակերներն էին, որ դարեր շարունակ քանդում ու ավերում էին մեր հեքյաթային աշխարհը, նրա գեղեցիկ քաղաքներն ու տաճարները, դաստակերտները, խաղաղ գյուղերն ու ավանները: Նրանք թալանում, կողոպտում էին հայ շինականին, գերում և առևանգում մեր գեղեցիկ հարսներին ու աղջիկներին, քույրերին ու մայրերին, աքսորում ու գլխատում մեր անվանի զորավարներին ու թագավորներին, կրոնիկ տակ առնում մեր ամբողջ երկիրը և հռոմեական «հեծյալների» քմահաճությամբ թողնում:

Ներկա Դիոկղեախանոսները, Կոստանդները, Վարագ-Շապուհները և Յովհնոսները նույն ստոր սրիկաներն են, ինչ որ եղել են իրենց նախնիներ՝ Պոմպեոսները, Կրասոսները, Օկտավիանոսներն ու ուրիշները: Նրանք խաբում են և բարեկամ ձևանում, երբ դու ուժեղ ես, հարձակվում և չեն խնայում քեզ, երբ դու քնած ես:

Նրանց ոչ մեկին չպետք է հավատար նրանց պետք է վաճել, հենց որ նրանք երևան, իսկ վաճելու համար հարկավոր է ուժեղ զինվորական ուժ և ամուր պետականություն»:

«Զինվորական ուժ» և «ամուր պետականություն» բառերը Վասակը հաճախ լսում էր սպարապետ Վաչե պապից և նույնը կրկնում իր ընկերներին:

Երիտասարդ հասակում Վասակին Արտավազդի հետ միասին, Վաչե սպարապետը հաճախ մասնակից է դարձնում օտարերկրյա հրոսակախմբերի դեմ մղվող կռիվներին, որտեղ երիտասարդ զինվորը մի շարք հաստամարտերում աչքի է ընկնում իր քաջագործություններով, իր զինվորական տաղանդով և հռչակվում որպես անվանի դուրավար:

Տիրան թագավորը սիրում ու հարգում էր տաղանդավոր զորավարին և դրա համար էլ Վասակին է վստահում իր Արշակ որդու դասակարակության ու կրթության գործը:

Վասակը մեծ սիրով է ընդունում այդ պատվավոր գործը: Նա շարունակ պատանի Արշակի հետ էր: Քաջ զորավարը ոչ միայն պատանու դայակն էր հանգիստնում, այլև նրա լավագույն խաղընկերն էր, մեծ եղբայրը, հայրը և ուսուցիչը: Վասակը, Արշակին հաճախ պատմում էր լսած և կարդացած պատմությունները, հռոմայցիների և պարսիկների ավազակային հարձակումների, նրանց կեղծ ու զզվելի դիվանագիտության, հայ ժողովրդի ազատատենչ ոգու, նրա անկախության համար մղած պատերազմների և առանձին հերոս զորավարների և հայրենիքի գործին նվիրված զինվորների քաջագործությունների մասին. նա պատանու մեջ ատելություն էր սերմանում դեպի բռնակալ հռոմայցիներն ու պարսիկները, և սեր՝ դեպի իր հարազատ հայրենիքը, ժողովուրդը և նրա անկախությունը:

Արշակը կլանված լսում էր իր պատկառելի ուսուցչի բոլոր պատմությունները և երբեմն՝ կրկնելով էժան դնով փառքի ձգտող հռոմեական տխրահաչակ զորավար Կրասոսի գլխի պատմությունը, աչքերը կկոցած ասում. «Մեր հողը մանող բոլոր կայսրներին և զորավարներին պետք է հենց այդպես գլխատել»:

Վասակ Մամիկոնյանը, Արտավազդի հետ միասին, հեռանում է արքունիքից, չկարողանալով տանել Տիրանի քմահաճ ներքին քաղաքականությունը, որը Հայր Մարգարեի ցուցումով, հողի համար անխնա կոտորում էր Ռշտունյաց և Արծրունյաց առններին, չխնայելով նույնիսկ փոքր երեխաներին:

Թե որքան արյուն էր հոսում հայոց բարձր լեռներում, կամ առատ արցունք թափվում խաղաղ քաղաքներում, դատաւերաններում և դյուղերում, այդ մասին նա միայն եկվորներից էր իմանում և ջղած-դորեն սեղմում էր բուռնցքը: Շմլվում էր հայ զորավարի արեւ սիրարը, լցվում դառնութեամբ և ատելութեամբ գեալի օտարերկրյա թշնամին, բայց ուժի բացակայութեամբ ստիպում էր լռել առանց զորքի զորավարին, և դիտել գեալքերի զարգացման հետագա ընթացքը:

Բայց տաղանդավոր զորավարին չի վիճակվում երկար փակված մնալ հայրենի գավառում: Երկրի անկախութեան շահերը պահանջում էին հետ գնել ամեն մի ներքին տարածայնութուն:

Պարսից Շապուհ II (310—379 թ. թ.) արքայից արքան, որին հայ ժողովուրդը կոչում էր Շապուհ-Վարդ, 350 թվին կեղծ բարեկամական հրավերով, խաբուրթյամբ իր մոտ տեսակցութեան է կանչում Հայոց Տիրան թագավորին, ամարդի ձեռով կալանավորում և շիկացրած երկաթով կուրացնում է նրան, որպեսզի գրանով իսկ վերջ գնի հայկական ինքնուրույն թագավորութեանը և կատարած լինի Մասանյանների վաղեմի բաղձանքը:

Տիրանի կուրացման լուրը կայծակի արագութեամբ տարածվում է հայկական լեռներում. գալիս-հավաքվում են նախաբարձրները, ավագները, կուսակալները, աղատները և առվիկները, բոլորը միաբան, բոլորը վրեժի հատուցման երդվածով: «Ապա միաբան ժողովի հավաքվեցին Հայաստան երկրի մարդիկ՝ մեծամեծ նախարարները, ավագները, կուսակալները, երկրների կառավարիչները, աղատները, զորահրամանատարները, դատավորները, պետերը, զորավար իշխանները, անգամ շինականներից ուսմիկ մարդկանցից (սմանք) ¹⁾»:

Հայ անվանի զորավարները՝ հավաքված զորազնդերի գլուխն անցած՝ կարում են պարսից ներսեն զորավարի ճանապարհը և

կանգնեցնում նրա զորաբանակների շարժումը դեպի Հայաստան:

Շապուհ արյունարբուն վերադարձնում է հայոց Տիրան թագավորին իր ընտանիքով, բայց կույր Տիրանը աչքիս անկարող էր հայոց թագաւոր լինել:

350 թվին Արշակ II-ին է անցնում հայոց թագաւորական գահը:

Իր թագաւորութեան առաջին օրերին Արշակ երկրորդը պալատ է հրավիրում և հայոց սպարապետութեան պաշտոնը հանձնում իր սիրելի ուսուցիչ, ականավոր զորավար Վասակ Մամիկոնյանին:

Կատարվում է Վասակի տարիների ցանկութեանը. նա իր ձեռքումն էր կենտրոնացնում Հայոց զինվորական ուժը, իսկ պետութեան գլուխ էր կանգնում իր դաստիարակած Արշակը, որն իր կազմակերպչական, զինվորական տաղանդով ոչնչով չէր զիջում ուսուցչին:

Դժվար չէր հիմա վերականգնել հայոց աշխարհի անկախութեանը և դուրս քշել հայկական հողից հռոմեական և պարսկական բռնակալ զորաբանակներին, կայսրների ու թագավորների «աչք ու ականջներին»: Դրա համար հարկավոր էր երկրում միասնութեան, ամուր պետականութեան և մեկ հրամանատարութեան ներքո զործող կազմակերպված ուժեղ բանակ:

Երկրում միասնութեան և ամուր պետականութեան ստեղծելու համար հարկավոր էր նախ սանձել կենտրոնախույս տրամագրութեաններ ցույց տվող նախարարական տներին, նրանց, ովքեր թագավորական թագի համար հաճախ խաղալիք էին դառնում հռոմեական կայսրների, պարսկական թագավորների ձեռքին և ջլատում երկրի ուժերը, ովքեր թերագնահատելով հայկական զորքի և թագաւորութեան ուժերը, վախկոտութեամբ առաջարկում էին Հռոմի կամ Պարսկաստանի վասսալ դառնալ:

Վասակը՝ Արշակի հետ միասին՝ անողորմ դատաստան էր տեսնում նման թուլամորթների, պետութեան ուժերը ջլատողների, վախկոտների, երկրի դավաճանների հետ: Այդպես են վարվում Արշակի եղբոր որդի Գնելի հետ,

¹⁾ Փալատու. «Պատմութեան Հայոց» էջ 5:

որը Բյուզանդիայից վերադառնալուց հետո բնակություն է հաստատում Կուաշ ավանում իր պապի՝ Տիբեռնի մոտ, և հունասեր կուսակցության օժանդակությամբ ձգտում Արշակից դահլ խելի:

Վասակ Մամիկոնյանի ձեռքը չդողաց նույնիսկ իր հարազատ եղբոր՝ Վարդան Մամիկոնյանի նկատմամբ, որի գլուխը կտրում է գլուխը լվանալու պահին նրա համար, որ պարսիկներ կուսակցության պարագլուխն էր և միջնորդը Շապուհ Վարազի: Նույն ձևով են վարվում Արշակն ու Վասակը Կամսարականների և մյուս ըմբոստնախարական տների նկատմամբ: Ընկճելով որոշ նախարարական տների գլխավորությունը, ենթարկելով նրանց թագավորական իշխանությունը, Մամիկոնյան դոքտրինը, իր թագավորի հետ միասին, ամուր կարգ ու կանոն է հաստատում երկրի ներսում:

Վասակը մեծ եռանդով սկսում է հայկական բանակի վերակառուցումը: Նա ձրգտում էր ստեղծել միասնական, մեկ հրամանատարություն զեկավարության ներքո գործող բանակ, այնպիսի բանակ, որը կարողանա հաջող կռիվ մղել իր երկրի վրա հարձակվող ուժերի դեմ, որը կարողանա պաշտպանել իր երկրի սահմանները և ամուր պահել ժողովրդի անկախությունը: Վերջապես նա ձգտում էր ստեղծել այնպիսի բանակ, որը թե՛ իր զենքի տեսակներով և թե՛ մարտունակությամբ գերազանցեր բոլոր բանակներից: Եվ Վասակ Մամիկոնյանին երկարատև աշխատանքի միջոցով հաջողվում է ստեղծել նիզակավորների, սակրավորների, աղեղնավորների, սուսերավորների, սաղավարտավորների, հեծյալ և հետևակային կորովալից, աներկյուղ, հայրենիքի և ժողովրդի գործին նվիրված այնպիսի բանակ, որի համբավը տարածվում է հայկական լեռնաշխարհից շատ հեռուները, և որի հետ արդեն լուրջ հաշվի են նստում հռոմայիցիներն ու պարսիկները:

Նա ամրացնում է հայոց աշխարհի բոլոր սահմանները, դասավորելով նախարարական տների առանձին գորարանակները Հայաստանի տարբեր սահմանագլուխներում և ենթարկում է նրանց ընդհանուր հրամանատարության:

Օգտվելով Արշակ Ա-ի թագավորության առաջին տարիների խաղաղ պայմաններից, երբ երկու ուսու պետությունները՝ Հռոմը և Պարսկաստանը՝ դադարել էին միմյանց բռնակցելուց և առ ժամանակ հանգիստ էին թողել հայկական հողը, Արշակ Ա և Վասակ սպարապետը կարողանում են իրականացնել իրենց ծրագրերը: Չորրորդ դարի երկու խոշոր գործիչները, Ներսես մեծի հետ միասին, Հայաստանի մի շարք վայրերում, բաց են անում դպրոցներ, հիօնադանոցներ, կարգի բերում պետության ներքին գործերը ձեռնարկում մի շարք կառուցումներ և ստեղծում այնպիսի մի ուժեղ թագավորություն, որի հետ արդեն հաշվի էին նստում այն երկրները, որոնք ամեն մի պատեն առիթով սանակոխ էին անում հայկական հողը, և ժողովրդի իրավունքը:

Հռոմայիցի անվանի պատմիչ Ամիանոս Մարկելլինոսի վկայությամբ՝ հռոմեական կայսրները մեծ նվերներով ցանկանում էին իրենց կողմը գրավել հայոց Արշակ թագավորին, որպեսզի նրա զինվորական ուժը կարողանային օգտագործել իրենց կայսրություն ծրագրերի իրականացման համար արևելքում:

«Նախ և առաջ աշխատում էին շքեղ, պերճ հագուստներով և տարբեր նվերներով գնել Արշակին...»¹⁾:

Իսկ պարսկական Շապուհ Վարազ արքունարքուն այնպիսի մոտ զբաղեցրած էր կոպերով էր ցանկանում կապել հայերի թագավորի հետ, որ նույնիսկ իր զեղեցիկ աղջկան առաջարկում էր Արշակին կնության:

«...Տայցեմ զգուստր իմ ի կնութիւն Արշակայ արքային հայոց...»²⁾:

Հայ հռչակավոր պատմիչ Մովսես Խորենացու վկայությամբ Հռոմի կայսր Վաղենտինոս Օգոստոսը, Արշակին ուղղած իր նամակում գրում է «Ինքնակալ Վաղենտինոս Օգոստոս, մեր աթոռակից և թագակից Վաղես կայսեր հետ, հայոց Արշակ թագավորին ողջուն:

¹⁾ Аммиан Марцеллин «История», вып. II, кн. 21, стр. 63, Киев, 1906 г.

²⁾ Փավոստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 133:

Դու պիտի հիշեիր այն չարիքները, որ ձեզ հասան անատված պարսիկներից, և այն երախտիքները, որ մեզանից գտել էք հուռցի ի վեր մինչև քո ժամանակ, և պետք է հեռանայիր նրանցից և մեզ մոտենայիր, որպեսզի մեր զորքի հետ խառնվելով կռվենք նրանց դեմ»¹⁾։

Հռոմի և Պարսկաստանի բարեկամական» ցույցերը և դիվանագիտական խաղերը Արշակին չեն դարձնում գաշակից ոչ առաջինի և ոչ էլ երկրորդի։

Հայոց Արշակ II թագաւորը, օգտագործելով Հռոմի և Պարսկաստանի միջև եղած հակասությունը, հաճախ ճարպկորեն հռոմեական դինդորական ուժն օգտագործում էր Պարսկաստանի դեմ և պարսկական զենքը՝ Հռոմի դեմ։ Երբ Հայաստանի համար սպառնալից թշնամի էր դառնում Հռոմը, նա դաշինք էր կնքում Պարսկաստանի հետ և միացյալ ուժերով ջարդում հռոմեական զորաբանակները, իսկ երբ Պարսկաստանն էր Հայաստանի անկախությանն սպառնում, Հռոմի հետ էր դաշնակցում։

Բայց եթե այդ երկու երկրներից մեկն ու մեկը համարձակվում էին վատալ դարձնել Հայաստանը, Արշակ վստահ իր զենքի, բանակների հզորության և ուժի վրա, դուրս էր քշում Հայկական երկրից օտար զորավարներին ու ներկայացուցիչներին և նույնիսկ «գոռոգարար» անպատասխան թողնում կայսրներից եկած բազմաթիվ պաշտոնադրեր։ Այդպիսի մի պաշտոնադրի մասին Մ. Թորենացին գրում է «...Իսկ Արշակը նույնիսկ չպատասխանեց այս թղթին, այլ ատամ բացելով նրանց արհամարհեց»²⁾։

Արշակը ճարպիկ դիվանագետ էր, բայց երբեմն չկարողանալով հասկանալ որոշ նախարարական տների մանյովրները և Պարսկաստանի ու Հռոմի դիվանագիտական խորամանկությունները, ընկնում էր թշնամու ծուղակը և ցուցաբերում կամքի թուլություն նշաններ։ Այդպիսի դեպքերում իրեն ամբողջ ուժով և վճռականությամբ հանդես

էր գալիս առդանդալոր, հնարաղետ Վասակ սպարապետը, որն իր մտածված խորհուրդներով կարողանում էր օգնել Արշակին՝ դուրս գալու ստեղծված դրությունից։ Բնորոշ է այդ տեսակետից երկու հետաքրքիր գեպք։

Շապուհ Վարազը, Մամիկոնյանների տան նահապետ Վարդան Մամիկոնյանի միջոցով կարողանում է համոզել Արշակին, որպեսզի հայոց թագավորը կարևոր պետական գործերով տեսակցության գա Տիգրան։ Արշակը իր սպարապետ Վասակի հետ միասին մեկնում է տեսակցության։ Տիգրանում, մի քանի օրվա բարեկամական ցույցերից հետո, Շապուհը նեղը զցելով Արշակին՝ ստիպում է Պարսկաստանին հավատարմության երդում տալ և կանչելով Տիգրանի քրիստոնեական եկեղեցու երեցներից մեկին՝ ստիպում է Արշակին երդվել ավետարանի վրա։ Արշակը ոչ մի ուժ չունենալով դիմադրության, երդում է ընդունում։ Վասակը տեսնում է, թե որքան վտանգավոր դրություն է ստեղծվում Հայոց երկրի անկախության համար, և հարմար առիթի է սպասում երդումը խախտելու։

Մեկ օր Արշակը Վասակի և այլ պալատականների հետ միասին գնում է Շապուհ Վարազի ախոռատունը դիտելու։ Պարսիկ ազնվական ախոռապետը ոչ միայն նստած տեղից սուքի չի կանգնում և անհրաժեշտ հարգանք ցույց տալիս հայոց Արշակ թագաւորին, այլ թշնամաբար ծաղրելով նրան՝ ցույց է տալիս ախոռի մեջտեղում ընկած խոտի խուրձը և ասում, «այժ Հայերի արքա, արի նստիր այս խոտի խրձի վրա»։

Հայոց քաջ զորավար Վասակ Մամիկոնյանը չկարողանալով տանել իր թագավորի նկատմամբ ցուցադրվող այս անպատվությունը, հանում է սուրը և մեկ հարվածով կտրում անպաական ախոռապետի գլուխը³⁾։

¹⁾ «Այն ժամանակ Պարսից Շապուհ արքան կանչում է իր մոտ Հայոց թագավոր Արշակին և մեծարում շատ պատվով ու մեծ փառքով և շատ ոսկու և արծաթի գանձով (իր թագավորութեան ճախութեան համեմատ)։ Եվ որպես եղբոր, որպես որդու դուր-

²⁾ Մ. Թորենացի «Հայոց պատմություն» էջ 187։

Շապուհ Վարադին բուրդովին գուր չի գալիս հայոց զորավարի նման համարձակ քայլը, այն էլ իր սեփական ախոռատնում իր տգնականի նկատմամբ, բայց իր դայքով թագցնելու համար նույնիսկ գովում է Վասակ Մամիկոնյանի արարքը և մեծամեծ նվերներ տալիս քաջասիրտ և ահարատեր սպարապետին, որպիսի տախթ հասաւորւած «բարեկամութեան» խափանման¹⁾:

գուրում է, ու տալիս նրան Ասրպատական աշխարհում երկրորդ մեծ իշխանութիւնը: Եւ ուրախութեան ժամին միասին բազմում էին միեւնոյն գահի վրա զարդարւած միագույն, միանշան, զգեստով: Եւ պարսից թագաւորը նմանատիպ թագ է պատրաստում իրեն և նրա համար:

Օրերից մեկ օր, պատահեց, որ հայոց թագաւոր Արշակը մտաւ Պարսից արքայի ախոռներից մեկը շրջելու, իսկ Պարսից արքայի ախոռապետը նստած էր ներսում ախոռատանը, երբ (նա) տեսաւ թագաւորին, բանի տեղ չդրեց և չպատկեց նրան, այլ անարգանք ու թշնամանք ևս հասցրեց, ասելով պարսկերէն լեզվով, թէ «այժմ հայերի արքա, արի, նստի այս խոտի խրճի վրա. այս խոտքերը երբ լսեց Մեծ Հայքի սպարապետը Մամիկոնյան տոհմից, որին Վասակ էին կոչում, մեծ ցասմամբ ու սրամտութեամբ բարկացաւ և բարձրացնելով սուսերը, որը կապած էր մեջքին, խփելով տեղն ու տեղը հենց ախոռատան մեջ գլխատեց պարսից արքայի ախոռապետին, որովհետեւ չկարողացաւ լսել ու տանել իր թագաւորին (հասցրած) անարգանքը. իր մահն աչքի առաջ ունենալը շատ անգամ ավելի էր գերադասում քան իր տիրողի մասին հեգնանքն ու անարգանքը» (Փաւստոս Բուզանդ «Պատմութիւն Հայոց» էջ 124—125):

¹⁾ Եւսկ Պարսից թագաւորն, երբ լսեց այդ մասին մեծ շնորհի արժանացրեց զարաւար Վասակին նրա քաջասիրտութեան և մեծ աներկյուղութեան վրա զարմանալով, ու քաջութիւնը և տիրասիրութիւնը գովելով՝ շատ պարգևներ տվեց ու պատվի արժանացրեց նրան» (Փ. Բուզանդ, «Պատմութիւն Հայոց» նույն տեղում):

Բայց ոչ մի միջոց չի օգնում պարսից թագաւորին. «վիճակը արդեն զցլած էր»: Վասակ Մամիկոնյանը կարողացել էր Արշակի առաջ քայ անել Շապուհի կեղծ ու նենգաւոր ծրարքերը, և համոզել Հայոց թագաւորին թողնել մահն ինչ և առանց ժամանակ կորցնելու հեռանալ:

Նման «բարեկամական» ցույց և խափութիւն է պատահում նաև Մծբինի տակ հայերի՝ Հոռմայեցիների դեմ տարած հաղթանակից հետո:

358—59 թվականներին մեծ պատերազմ է սկսւում Հոռմեական և պարսկական երկու աշխարհակալ տերութիւնների միջև: Պարսից Շապուհ Վարադը, պարսիկների հաղթանակն ապահովելու համար, օգնութիւն է խնդրում Հայոց Արշակ թագաւորից:

Արշակ Ա-ը հոռմայեցիների ուժը թուլացնելու, նրանց թալանչի զորաբանակներին ջախջախելու և արևելքից գուրս վաճելու համար, չի մերժում Պարսից Շապուհ թագաւորի խնդիրը և հրամայում է հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանին կազմել, պատրաստել ընտիր զորագնդեր, հոռմայեցիներին չնոսացվող դաս տալու համար:

Վասակ Մամիկոնյանը, որ տարիներ շարունակ, իր սրտում մեծ ատելութիւն էր պահել դեպի հոռմեական ավազակ լեզեոններն ու նրանց ստոր հրամանատարները, և դեռ մանուկ հասակում հաննիրալյան երգում էր տվիլ՝ մեծանալու դեպքում վրիժառու լինել շուն հոռմեացիների նկատմամբ, անմիջապէս կատարում է իր թագաւորի հրամանը: Քաջ սպարապետը Հայոց աշխարհի բոլոր ծայրերից հավաքում է ընտիր նիդակաւորներ, քաջ սուսերաւորներ, անվրեպ խփող աղեղնաւորներ, իրենց գործն իմացող սակրաւորներ, զրահաւորւած հեծյալներ, կազմում առանձին զորագնդեր, կատարում զորատես և առաջնորդում նրանց դեպի հաղթական կռիւ:

Երբ Հայոց 400 հազարանոց բանակը մտնում է Մծբինին, Վասակ Մամիկոնյանը առաջաւոր ջոկատների միջոցով կարողանում է տեղեկանալ, որ թշնամին իր գերազանց ուժերով, որոնք ծովի ավազից էլ շատ էին, Մծբինի տակ բռնել է արդեն

կարևոր ստրատեգիական գործքեր և սպասում է հակառակորդի բանակներին երևալուն, իսկ պարսից բանակները Մծբինի մարտադաշտից դեռ շատ հեռու են գտնվում:

Երբ Հայ գինվորները տեղեկանում են պարսկական զորաբանակներին ուշացման մասին, իրենց քաջ զորավար Վասակ Մամիկոնյանի հետ միասին գիծում են Հայոց Արշակ թագավորին և պահանջում չսպասել պարսկական բանակներին և միայն հայկական զինվորով հարձակվել հռոմեացիների վրա¹⁾:

¹⁾ «Ապա Արշակ թագավորը հրամանավեց իր սպարապետ Վասակին դուռնդ գումարեր, զորք պատրաստել և նա անհապաղ կատարեց թագավորի հրամանը՝ հավաքելով չորս հայրուք հազար կուռ զինված գինվորներ, որոնք քաջության գործում արիություն էին ցուցնում: Այսպես պատերազմողներ էին: Նիզակագիններ, սուսերապետներ, անվերայ և կորովի աղեղնավորներ, վազրավորներ, սակրավորներ, որոնք ախոյաններից երկյուղ և անշուշեին, հեծյալները ամբողջությամբ զրահավոր ու պատենապետք, սաղավարտավորներ, գրոշակավորներ զարդարված նշաններով—բազմաձայն փողհարներին հետ:

Շարժվեց, գնաց Արշակ թագավորը բազմաթիվ նախարարներով, անցավ Աղձնիքով՝ իր իշխանությունը, գնաց հասավ Արուստաման երկիրը: Մծբին քաղաքի դեմ, որ պատերազմի ճակատամարտի վայրն էր, ապա գնացին տեսան երկու կողմերից պատերազմի համար ժամադրված տեղը:

Իսկ Հռոմաց զորքերը հասնելով, ինչպես ավազը ծովի ափին, իրար վրա բանակել էին բազմություն, իսկ Պարսից զորքերը գալիս էին հասնելու պատերազմի համար որոշված վայրը: Սակայն Հայոց արքայի զորքերը պարսկականից շուտ հասել, կռիվ էին առել ճակատամարտի վայրում:

Անգործ նստելուց Հայոց զորքն օկսեց անհամբեր դառնալ, չհաճեցին մնալ կամ սպասել պարսից զորքերին, այլ կամեցան հարձակվել, գիծել, հասնել Հռոմաց թագավորի վրա՝ միայնակ, առանց Պարսից զորքերի, մենակ ավարտել պատերազմի գործը: Եվ Հայոց զորքերից ամեն ոք, յուրաքանչ-

Արշակ Ա թագավորի հրամանով հայկական զորքերի քաջարի սպարապետը հայկական հեծյալ և համակային զինվորին առաջնորդում է դեպի հաղթական կռիվ:

Հասել էր ժամը, երբ Վասակ Մամիկոնյանը պետք է իր սրի ուժի միջոցով հաշիվ պահանջեր Հռոմեացիներից Լուկուլոսին և Պոմպեոսին կատարած ավերածությունների, Անտոնիոսի սրիկայություն և Հռոմեական լեգեոնների դարերի ընթացքում կատարած ավազակությունների համար: Նա Մծբինի մոտ պետք է կատարեր իր տարիների ցանկությունը՝ կտրել Հռոմեական դուռ զորավարների դուռնը կրասոսի գլխի նման, որպեսզի շուտ Հռոմեացիները վերջնականապես համոզվեին, որ իրենց գեմ հայերը դեռ սրած և ամուր ձեռքում են պահում օտարներին ոչնչացնող իրենց սուրը, որը պատյանի մեջ չի մանի մինչև չոչնչացվեն և արևելքից վերջնականապես դուրս չվանդվեն թալանչի հռոմեացիները:

Մծբինի ճակատամարտում Վասակ Մամիկոնյանը, պետք է ցույց տալ իր ամբողջ գինվորական տաղանդը, Հռոմեացիներին ջախջախելու և հաղթելու հնարավորությունը, ցրելու հռոմեական լեգեոնների դարերի ընթացքում ձեռք բերած անհաղթելիության առասպելը:

Հյուրն ինքնակամ, համարձակորեն արշավում էր, ևս առավել նրանց զորավար Վասակը արշավում էր ամեն կողմ, կուսակառու էր լինում, չէր կամենում (սպասել) մինչև Պարսից զորքերի գալուստը, այլ (ցանկանում էր) ինքը վերջացնել պատերազմի գործը:

Ապա Հայոց զորքերն ամբողջությամբ չօգնեցին իրենց թագավոր Արշակի առաջ և խնդրեցին որ չպահի իրենց մինչև պարսից արքա Շապուհի գալը, այլ ինչի համար որ եկել են, հրաման տա հարձակվել նրանցից շուտ, քան թե սպասել օտար աշխարհում:

Այլիկ ևս վշտանում էին, որովհետև ավելի լավ էին համարում մեռնելը, քան օտար աշխարհում հապաղելը՝ (Փավստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 130—131):

Բայ Վասակ սպարապետը մեծ վարպետութեամբ կարողանում է Հայկական դիպերը հասցնել թշնամու թիկունքը և հանկարծակի հարձակում գործելով թիկունքից, անակնկալի է բերում Հռոմեական քանակին և այսպիսի մի ջարդ տալիս, որ հռոմեացիներից ոչ մեկին չի հաջողում դուրսն ազատել Մծբինի մարտադաշտից¹։

Հռոմեական ավազակային զորաբանակների գլխավորն ջախջախման, հայկական զորքի, առանձնապես հեծելազորի, կատարած սխրագործութեանների, հայ զորավարների անձնավերութեան ու աչքի ընկնող քաջագործութեանների մասին լսելով պարսից Շապուհ Վարազը անմիջապես «բարեկամութեան» մեծ տոնախմբութեան է կազմակերպում և մեծ պատիվներ տալիս հայոց թագավորին, իշխաններին և Վասակ Մամիկոնյանին։ Ապա մեծարելով Հայկական զորքին, նրա քաջ զորավարներին ու անհաղթ Արշակ թագավորին, իր գեղեցիկ դստերն ի նշան հայ-պարսկական «անխախտ» դաշինքի առաջարկում է Արշակ թագավորին կնութեան։

«Ապա խոսել սկսեց Պարսից թագավոր Շապուհն իր զորքի հետ, թէ ինչ պատվական պարգևներ, կամ ինչ հատուցում կարող ենք մենք տալ հայոց թագավոր Արշակին, որ այսպիսի զորք կատարեց, կամ այսպիսի քաջութեան արեց, կամ այսպիսի թշնամիների ջարդեց և այսպիսի պատերազմ մղեց, կամ այսպիսի ճակատամարտի մեջ հաղթեց և այսպիսի անուն ձեռք բերեց մեզ համար, արդ՝ ինչպիսի բարիքներով մենք կարող ենք հատուցել նրան։ Եվ այս-

պես մտածմունքների մեջ էր ընկել, թե ինչ պիտի լինի այն, որ ևս տամ նրան։

Ապա Պարսից Շապուհ արքային իր նախարարները պատասխան տվին, և ասեցին, թէ ինչ որ կամենաս, և ինչով ցանկանաս կարող ես հաճել նրան, շատ (ունես) դու ոտի, արծաթ, կերպաս և մարդարիտ, ինչ որ ցանկանում ես շնորհել նրան, ասուր նրան։ Ապա պարսից թագավոր Շապուհը պատասխանեց իր իշխաններին և ասաց «ինչ որ դուք ասացիք այժմ սեր չէ, եկեք մենք այսպիսի սեր ստեղծենք հայոց արքա Արշակի հետ, որ մինչև հովիտյան նա անբաժան լինի մեզանից։ Կտամ իմ դուստրը կնութեան Հայոց արքա Արշակին և կտամ նրան մեծ իշխանութեան²»։

Շապուհ Վարազի արած առաջարկը թեպետ մեծ ցնծութեամբ է ընդունվում հայ և պարսիկ իշխանների կողմից, սակայն նա բոլորովին չի զարմացնում և չի ուրախացնում Վասակ սպարապետին։

Նրա համար նորութեան չէին արևելյան դեսպոտի կեղծ ցույցերը, բայց հարկավոր էր այդ բանում համոզել նաև Արշակին, որը Շապուհի դստեր գեղեցկութեանից կուրացած՝ կարող էր երկիրը կործանման առաջ կանգնեցնել։

Վասակը, Սյունյաց դաւառի նահապետ Անդոկի հետ միասին, որը Արշակի կնոջ հայրն էր, կարողանում է հասկացնել Արշակին՝ որ այդ շրջանող ընդունելութեանը և բարեկամական դաշինքը արևելյան կեղծ դիվանագիտութեան մի նոր, ավելի քողարկված ձև է։ Բարեկամութեան, ազնվութեան և ուխտ հասկացողութեանները Շապուհի համար միայն միջոց են՝ իրեն նպատակների իրականացման համար, որ նույնանման բարեկամական ընդունելութեանից հետո էր, որ նա հանել տվեց քո հարազատ հոր՝ Տիրանի աչքերը, որ Շապուհի ներկա բարեկամական ցույցի նպատակն այն է, որպեսզի մեր կազմակերպած քաջաբեկ Հայկական բանակը թուլացնի Հռոմեական պատերազմում և հարմար մոմենտին ավազա-

1) «Ապա Արշակ թագավորը թույլ տվեց նրանց և հանձնեց պատերազմի զործը։ Ապա մեծ Հայքի սպարապետ զորավար Վասակը կարգեց, կազմեց, պատրաստեց Հայոց ամբողջ զորքը։ Վարեց, զինեց, ժամադիր եղավ Վասակը. ամբողջ պատերազմող զորքերով Արարատյան գնդով ելավ ընկավ բանակի վրա։ Արի քաջելով այսպես կռուրեցին, որ կենդանի չթողեցին նրանցից և ոչ մեկին» (Փափառոս Բուզանդացի, «Պատմութեան Հայոց», էջ 131)։

2) Փափառոս Բուզանդացի, «Պատմութեան Հայոց», էջ 132։

կային հարձակում գործի մեր հարադատ երկրի վրա և հետ խլի մեր ձեռք բերած անկախությունը: «Հռոմայեցիներին ջարդելը նույնպես անհրաժեշտ է, ասում էր Վասակը, բայց մեր տված Մծրկնի գառը և ներկա Պարսկա-հռոմեական պատերազմը դեռ տասը տարի ութի չի կանգնեցնի հռոմայեցիներին և այդ ժամանակամիջոցում մենք կկարողանանք պատրաստվել՝ նոր հարձակումների դեպքում անհրաժեշտ հակահարված տալու համար»:

Արշակ երկրորդը՝ առանց ժամանակ կորցնելու, Վասակի և Անդովկ իշխանի հետ միասին գիշերով թողնում է ամեն ինչ և հեռանում պարսկական բանակից:

«...Սորհուրդ արեց Հայոց թագավոր Արշակը, և գիշերը վեր կացան ինչքան որ մարդիկ կային Հայոց բանակում, հեծան ձիերը և փախան: Եվ տեղում թողեցին խորանները, վրանները, կահն ու կարասին և իրենց ունեցվածքը և իրենց բանակը, և դադարի գնացին, պարսից բանակից ոչ ոք չիմացավ այդ մասին մինչև լուսաբաց»:

Եվ երբ եկավ Պարսից թագավորին բարի լուս մաղթելու ժամը և բոլոր թագավորները, իշխաններն ու մեծամեծները Պարսից արքային բարի լուս մաղթելու եկան, նրանց մեջ ոչ մի տեղ չերևաց Հայոց թագավոր Արշակը, իր մեծամեծներով: Ապա պարսից թագավոր Շապուհը հրաման տվեց յուրայիններին՝ գնալ և տեսնել, թե ինչ է պատահել Հայոց թագավոր Արշակի բանակում, որ այդքան ժամանակ ուշացավ Պարսից արքային բարի լուս մաղթելու գալ: Ապա գնալով տեսան, որ բանակը թափուր և առանց մարդի է մնացել, որովհետև թողել էին իրենց խորանները, վրանները, հովանոցները, սրահակները, դահույքները, անկողինները և իրենց կահ կարասին, և մինչև անգամ իրենց գանձը: Միայն զենքերն էին վերցրել իրենց հետ և դնացել: Եվ ովքեր գնացին բանակը, եկան ամենը պատմեցին Պարսից արքա Շապուհին: Եվ երբ լսեց Պարսից արքա Շապուհը, որովհետև իմաստուն մարդ էր, հասկացավ իր իմաստությամբ այն, ինչ որ եղել էր, իսկույն ասաց, թե Հայոց թագավորի փախուստը այստեղի

իմ մարդկանց շնորհիվ է եղել, մեզնից, մեջոնցից, այս պաշտպան են, ասաց, (նրանք), որոնք փախցրին այն մարդին, Արշակին: Ապա իր ավագներից, մեծամեծներից շատերին ձիով դեպքան ուղարկեց հայոց թագավորի հետևից, սիրո և միաբանության երդմամբ և հանդիմանությամբ, որպեսզի հետ դարձնեն և չարախոսության խոսքեր մեջ քերելով կշտամբեն:

Եվ չկամեցավ հայոց արքան ունենալ Պարսից թագավոր Շապուհի պատգամավորների խոսքերին և այլևս հետ չգարձավ Պարսից երկիրը¹⁾:

Վասակ սպարապետի բանակում կատարած ձեռնարկումները, Հայոց Արշակ թագավորի վարած ինքնուրույն արաքին քաղաքականությունը, հայկական թագավորության ամրացումը չէր կարող չանհանգստացնել պարսկական և հռոմեական բռնակալներին, նամանավանդ, երբ Հայաստանն իրեն ենթարկելու, այն վասալական մի երկիր դարձնելու բոլոր փորձերն անհաջողության էին հանդիպել: Շապուհ Վարազը ձգտում էր արագությամբ ավարտել հռոմայեցիների դեմ մղվող պատերազմը, որպեսզի հնարավորություն ունենա պատերազմական գործողություններ սկսել հայերի դեմ:

Պարսկա-հռոմեական պատերազմի ժամանակ հռոմեական Հուլիանոս կայսրը, ծանր կացության մեջ ընկնելով Տիգրիսի և Եփրատի հովտում, չղիմանալով նրա կլիմայական պայմաններին, մահացու հարվածներ կրելով Շապուհի առանձին փոքր զորաբանակների կողմից, որոշում է թողնել Տիգրանին մասնալու միտքը և վերադառնալ հորդուաց աշխարհը, որպեսզի կարողանա փրկել իր 65 հազարանոց բանակի մնացած զորագնդերը, բայց ճանապարհին ընկնում է թշնամու արձակած թունավոր նետից:

Հռոմի նորընտիր փախկոտ Հովիանոս կայսրը 363 թվին շտապեց ամոթալի և ստորացուցիչ պայմանագիր կնքել Շապուհ Վարազի հետ, որի համաձայն Աղձնիքը, Մոկ-

¹⁾ Փախուստ Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 134:

քը, Ծավդեքը, Կորդուքը, Ռեհիմենեն 15 բերդերով, ինչպես նաև Մծբին, Մինդարա, Կասարա և Մավրորում քաղաքները անցնում էին պարսիկներին:

Դաշնագրությունը միաժամանակ պարտավորեցնում էր Հռոմեական կայսրին չօգնել Հայաստանին, եթե Պարսկաստանը պատերազմ սկսի հայերի դեմ:

«Երբ խաղաղություն եղավ Հունաց թագավորների և Պարսից թագավոր Շապուհի միջև, հունաց թագավորը Պարսից թագավորին տվեց զբաժնու կնքած դաշինքի նամակ, և գրված էր դաշինքի նամակում այսպես. Տալիս եմ քեզ, ասում է Մծբին քաղաքը, որն Արվաստանումն է, և ասորական Միջագետքը, և Հայոց միջնաշխարհից ձեռնաթափ եմ, ասում է, եթե կարողանաս հաղթել նրանց և ծառայության տակ պահել, ես նրանց օգնության չեմ գա»¹):

Ապահովելով արևմտյան ճակատը և ձեռքերի ազատություն ստանալով արևելքում, արյունարբու Շապուհը 364 թվին ավաղակային հարձակում է սկսում հայոց աշխարհի սահմանների վրա:

«Եվ երբ խաղաղություն եղավ Հունաց թագավորի և Պարսից թագավորի միջև, Պարսից թագավոր Շապուհը պատրաստեց իր զորքերը և շարժվեց մարտով ու պատերազմով Հայոց արքա Արշակի վրա»²):

Արշակ թագավորը սահմանապահ զորամասերից տեղեկություն ստանալով պարսիկների ավաղակային հարձակման մասին, հրամայում է սպարապետ Վասակ Մամիկոնյանին կազմել անհրաժեշտ քանակությամբ զորաբանակներ՝ թշնամուն հայրենի հողից դուրս վճռելու համար:

Պարսիկների դեմ մղվող հաղթական պատերազմներումն է, որ ամբողջությամբ հանդես է գալիս հայ մեծ զորավարի ուժն ու կարողությունը, նրա զինվորական տաղանդն ու ընդունակությունը: Նա մեծ գորավարին հատուկ եռանդով, արագությամբ, հայոց աշխարհի բոլոր ծայրերից, հավաքում

է լավ զինված, վարժված կռու և կորովալից վեց հարյուր հազարանոց մեծ բանակ, բաժանում զորագնդերի, կատարում զորատես և առաջնորդում նրանց դեպի հաղթական կռիվ³):

Տաղանդավոր զորավարը առաջին անգամ չէր, որ հանդիպում էր պարսկական զորաբանակներին: Նա տարիներ շարունակ փոքրաթիվ, բայց հայրենիքին նվիրված զորաբանակներով, կռվի էր դուրս եկել պարսկահռոմեական զերադանց ուժերի դեմ և միշտ պարտության մասնել նրանց: Այդ կռիվների ընթացքում Վասակը կարողացել էր մոտիկից ծանոթանալ պարսկական բանակի խոցելի կողմերին՝ նրանց հրամանատարների ռազմական կարողություններին և զինվորների կռվելու ընդունակություններին:

«Բավական է պարսիկ զինվորին նիզակի ծայրը ցույց տալ, և նա սարսափած հեռ կփախչի, իսկ գիշերվա հարձակման դեպքում գլուխը կտրցրած ընկերոջը կմորթի»: Այսպես էր բնութագրում հայոց սպարապետը պարսկական զինվորին:

Նա տարիներ շարունակ կարողացել էր լավ ուսումնասիրել մարտի հարձակողական և պաշտպանական տակտիկաները:

Նա բոլորովին ծանոթ չէր Ալիիրիադեսի մարաթոնյան դաշտի հույլիտական տակտի-

¹) Փավստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 136:

²) Փավստոս Բուզանդացի, նույն տեղում:

³) «Իսկ Հայոց թագավորի սահմանապահները, որ նստում էին Ասորպատականի Գանձակում, շուտափույթ լուր են տալիս նրան կատարվածի մասին, երբ դեռ նա (Շապուհը) չէր հասել Ասորպատականի սահմաններին: Երբ այդ լիճացավ Հայոց թագավոր Արշակը, հրաման տվեց իր սպարապետ Վասակին, պատրաստել ամբողջ զորքերը և հասնել՝ զինադրություն ցույց տալ Պարսից թագավոր Շապուհին: Այդ արագ հավաքելով մի վայրում՝ հայոց բոլոր զորքերի սպարապետ Վասակը զորահանդես արեց, և հաշվեցին ամբողջը վաթսույն բյուր (600,000) կռու սպառազինված միասիրտ, միաբան և հավատարիմ, նիզակավոր հեծելազոր» (Փավստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց» էջ 138):

կային և ոչ էլ աշխարհահոշակ Հաննիբալի Ալպյան հանձարեղ անցումին, բայց նրա կազմակերպած հարթավայրային հարձակումներն ու լեռնային անցումները զարմանք էին պատճառում ժամանակի շատ զորավարներին:

Վասակն ուներ հարձակման միանգամայն ինքնուրույն տակտիկա, որը բոլորովին նման չէր պարսկական ամբոխավարության: Մարտը սկսվելուց առաջ յուրաքանչյուր զորամաս պետք է գիտենար իր տեղն ու դերը և մարտադաշտում պետք է ժամանակին բռներ իր տեղը համապատասխան դասավորությամբ: Առաջին շարքերում նետ ու աղեղ կրողները, ապա նիզակավորներն ու սուսերավորները և թևերում օժանդակող ու հարվածող հեծելազորը: Հետաքրքիր էր նրա վարած գիշերային հարձակումների տակտիկան, որը կիրառվում էր գլխավորապես թշնամու գերազանց ուժերի առկայության պայմաններում: Վասակ սպարապետը անձամբ զորաբանակից առանձնացնում էր մեկ գունդ և բաժանում փոքր շուկատների, ոչ ավելի 10-ից, ոչ պակաս 4-ից: Բաժանված մանր միավորումները թշնամու խփած ճամբարի տարրեր կողմերից կես գիշերին հարձակվում էին քնած բանակի վրա, իսկ մնացած զորամասերը շրջապատելով ճամբարը սպասում էին օգոհանշանի:

Ճամբար մտած զորախմբերը մեծ աղմուկով, դռում դռումով արթնացնում էին թշնամուն և սկսում հարվածել: Ահաբեկված թշնամին գլուխը կորցրած մութ խավարի մեջ, սկսում էր միմիանց կոտորել: Վասակի շուկատները ամբողջ ճամբարը ոտքի կանգնեցնելուց հետո, արագությամբ դուրս էին գալիս թշնամու բանակից և միանում իրենց սպասող զորամասերին: Երբ սկսվում էր միմյանց շարժող բանակի նահանջը, Վասակի սպասող զորախմբերը փակում էին նահանջող զորքերի ճանապարհը և հիմնովին ոչնչացնում նրանց:

Կովի ժամանակ Վասակի գործադրած ձևերից մեկն էլ գործող բանակի արագաշարժությունն էր: Նա վերջ էր տվել արևելյան բանակներին հատուկ դանդաղկոտությունը, նրա հեծելազորը, իրեն գործողու-

թյունների արագաշարժությունը փայլում էր ամբողջ արևելքում: Նա հայտնվում էր թշնամուն անսպասելիորեն, թիկունքում, թևերում, ճակատում, այնտեղ, որտեղ որոշ հաջողություններ էր ունենում հակառակորդը և օգնում իր հետևակ զորամասերին՝ մարտը շահելու համար:

Վասակի կիրառած տակտիկական ձևերը և նրա գլխավորած կովող զորքի նվիրվածությունն ու դեպի հաղթանակն ունեցած մեծ հավատը, ապշեցնում էին նույնիսկ թշնամիներին:—«Պարսից Շասլուն Վարադ» տալը՝ երանի որ Հայոց գնդին տեղ իցէ, այնպիսի տիրասէր և միաբան միամիտ զորացն»¹):

Նման գինված, վարժված և հայրենիքին ու ժողովրդին նվիրված զորք ունենալուց հետո Վասակի համար այլևս դժվար չէր հաղթել թշնամուն, նույնիսկ պարսկահռոմեական դաշնակցության առկայության պայմաններում: Նա արդեն այնքան ուժեղ էր դարձել, որ կարողանար առանց կողմնակի ուժի օգնության շարժել և հայրենի հողից դուրս վաճել թշնամուն, եթե նույնիսկ թշնամին դուրս բերեր բացարձակ գերազանց ուժեր: Վասակ սպարապետը որոշել էր թշնամուն թույլ չտալ նույնիսկ հայկական հողը մտնել, և այս որոշումով էլ նա հայ քաջարի զորաբանակներին առաջնորդում է դեպի հաղթական պատերազմ:

Հետախուզությունից մանրամասն տեղեկություններ ստանալով թշնամու ուժերի և շարժման ուղղության վերաբերյալ, սպարապետը որոշում է թշնամուն գլխավորել Սարաթատականի սահմանադիմում, և արագությամբ զորաբանակները շարժում է դեպի Սարաթատական:

Սահմանադիմում երկու բանակները հանդիպում են միմյանց, տաղանդավոր սպարապետը, առանց ժամանակ կորցնելու, հայկական գնդերը դասավորում է այնպես, որ թշնամին օղակի մեջ ընկնի և միայն մեկ ճանապարհ ունենա նահանջի: Լուսաբացին սկսվում է հայկական բանակի հար-

¹) Փ. Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 202:

ձակումը: Հանկարծակիի եկած թշնամին գլուխը կորցրած գիծում է փախուստի, բայց պարսկական ոչ մի զինվոր չի կարողանում գլուխն ազատել ուղմադաշտից: միայն Շապուհ Վարազն է կարողանում գլուխը պըրծացնել Վասակի սրից¹⁾:

Առաջին անհաջող ճակատամարտից հետո Շապուհ Վարազը հավաքում է մեծ թվով զորք, ինչպես Փալատոսն է ասում, «իբրև դաւադ առ ամին ծովու», բաժանում երեք առանձին բանակների: Առաջին բանակին հրամանատար կարգում Անդիկանին, երկրորդ բանակին՝ Հազարավուխտ անվանի զորավարին, իսկ 3-րդ զորաբանակին գլխավորում է ինքը Պարսից Շապուհը այս հարձակման համար հավաքել էր անթիվ փղեր, հազարավոր ձիեր, երկրի բոլոր ծայերից հարյուր հազարավոր զինվորներ:

Պարսից Շապուհը կարծում էր, թե իր երեք զորաբանակներին դիմադրելու ուժ չի ունենա Հայոց թագավորը, եթե հարձակումը սկսի մեծ արագությամբ և 3 կողմից: Հայոց Արշակ թագավորը երեք զորաբանակներին համադաստասխան ուժերով դիմադրություն կազմակերպելու համար Վասակ սպարապետի հետ Հայոց զորքը համապատասխան ձևով բաժանում է երեք զորագնդերի, որոնցից առաջինի հրամանատարությունը վերցնում ինքը, երկրորդը հանձնում է Վասակին, իսկ 3-րդը Բագասին:

Վասակ սպարապետը պարսից զորավար Հազարավուխտի գերազանց ուժերին հանդիպում է իր գնդերով Վանանդ գավառի Երևոյալ վայրում, որտեղ և տեղի է ունենում արյունալի և դաժան, բայց հաջերի համար հաղթական ճակատամարտ:

Երևոյալի ճակատամարտում Վասակ զորավարն իր քաջարի բանակին նոր փառքով

է պսակում: Տասնյակ հազարավոր պարսկական զինվորներ իրենց գերեզմանն են գտնում Հայկական հողում—Ջախջախված թշնամին ուղմադաշտում թողնում է մեծ քանակությամբ սպանվածներ ու ուղմական ավար²⁾:

2) «Այն ժամանակ Պարսից թագավոր Շապուհը ժողովեց իր անթիվ և անհամար զորքերը, ինչպես ավազը ծովի ամին, և շատ ու շատ փղեր, այնպես որ չկար նրանց թիվ: Երեք մասի բաժանելով զորքերը, երկու գնդերին զորագլուխներ կարգեց Անդիկանին և Հազարավուխտին, և մի գնդին ինքը՝ թագավորն եղավ զորագլուխ: Եվ հրաման տվեց թագավորը զորքերին՝ երեք տեղերից շարժվել մասնել, արշավել Հայոց աշխարհը: Այս դեպքերն արագորեն իմաց տվին հայոց թագավոր Արշակին, և նրանց զորավար Վասակին, ապա և նրանք բազմաթիվ զորքեր ժողովեցին աշխարհից, այնպես, որ անհաշիվ էր զորքի բազմությունը:

Եվ թեպետ շատ աճապարեցին, սակայն Պարսից զորքերն արշավում էին Հայոց երկիրը և երեք (կողմերից) ասպատակում:

Ապա Արշակ թագավորը նույնպես իր զորքերը բաժանեց երեքի և տվեց մի գունդը Վասակ սպարապետին, և երկրորդ գունդը՝ նրա (Վասակի) եղբայր Բագասի ձեռքը, որը արիության գործերում անչափ քաջ էր, բայց իմաստության գործերում անմիտ, իսկ մյուս գունդը Արշակ թագավորն ինքը վերցրեց: Եվ տվեց հրաման առաջ խաղալ, պատրաստվել, դեմ առ դեմ մարտ տալ Պարսից զորքերին: Ապա եկավ Վասակ սպարապետը, գտավ Պարսից զորքերի առաջին մասի առաջնորդ Հազարավուխտին, որովհետև հասել էին Վանանդի գավառը Երևոյալ անունով կոչվող տեղը, և հարձակվեց Պարսից զորքի դեմ մարտով և սպանեցազմով: Պարսության մասնակցին Պարսից զորքերը, սկսեցին փախչել, ցրվել: Հասնում էր զորավար Վասակը, բռնում Պարսից բոլոր փաստական զորքերին և կենդանի չէին թողնում ոչ մեկին, և խեցին մեծ ավար և փղեր» (Փալատոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 137):

1) «Եվ նրանց հետ առաջ ընթացավ հայոց սպարապետ Վասակը, հասավ և պարտության մասնեց պարսից թագավորին: Անխրտիք բոլոր զորքերին հարվածեցին իրենց սրերով, և Պարսից արքա Շապուհը միաձի հողապրեց» (Փալատոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 137):

Նման ջարդ կրեցին նաև Շապուհի և Անդրիկանի բանակները Արշակ Թադավորի և Բադասի զորաբանակների կողմից:

Այս ճակատամարտից հետո Շապուհ Վարադի համար միանգամայն պարզ դարձավ, որ Հայկական ներկա Վասակյան բանակի հետ զգվար է հաշիվը վերջացնել, բանակ, որը կոչվում է մեծ քաջությամբ, աներկյուղ և վարպետությամբ, և որը ունի իր Թադավորին, Ժողովրդին և հայրենիքին նվիրված տաղանդավոր լավագույն զորավարներ, որը թշնամու նույնիսկ գերազանց ուժերի տակալության գեղքում չգիտես հաճանք, և որը կոչվում է անվեհերությամբ մինչև վերջին մարդը, մինչև վերջին շունչը: Եվ Պարսից Շապուհը այդ քաջարի բանակի ուժը փշրելու համար իր գիտանոցից հանում է Պարսկական ժանգոտած հին զենքը — պառակտում և դավաճանություն կազմակերպում Հայոց աշխարհում: Իրա համար նա բավական հոգ ունի՝ հանձնել պարսկասեր կուսակցության Շապուհ Վաքադն իր մոտ է կանչում և Հայաստանի Թադավորության գահը առաջարկում հայ ազնվական Վասակ Մամիկոնյանի քրոջ որդի, պարսկասեր կուսակցության ականավոր պարագլուխ Մերուժան Արծրունուն, որը գահի և փառքի համար ծախելով հայրենիքը, Ժողովուրդը, ընտանիքը՝ ուրանում է քրիստոնեությունը և ընդունում պարսկական հավատը:

Դավաճան և ուրացող Մերուժանը Պարսկական մեծ զորաբանակի գլուխն անցած, արշավում է Հայաստանի վրա: Մերուժանին իր ձեռնարկման մեջ մեծ շափով օգնում էր նաև Վասակի կրտսեր եղբայր Վահան Մամիկոնյանը, որին Շապուհը ոչ միայն մեծարել բարձրացրել էր պարսից պալատում, այլև իր Որմզդուխտ քույրն էր տվել նրան կնության:

Հայկական բանակները Անգեղտան ասորին գավառներում նստած սպասում էին պարսիկների հարձակման, երբ լուր է ստացվում այն մասին, թե թշնամին Մերուժանի առաջնորդությամբ բոլորովին այլ ուղղությամբ է մտել Հայկական հողը:

Վասակը 10 հազար հեծեալների գլուխն անցած, մեծ արագությամբ հասնում է

Թշնամուն, ջարդում, և դուրս քշում Հայկական հողից:

Դավաճան Մերուժանը, Պարսից Շապուհ Վարադը այս պարտությունից հետո առանց դադարի նոր բանակներ են կազմում՝ Հայաստանի վրա մի նոր ավիլի ուժեղ հարձակում գործելու համար:

Պարսից արքան Վասակին հաղթելու համար այս արշավանքի ժամանակ գլխում է մի այլ խորամանկություն: Երբ Հայկական զորաբանակները Ատրպատականի սահմաններում նստած սպասում էին Շապուհի բանակին, Շապուհի բանակը Մերուժանի առաջնորդությամբ Աղձնիքի վրայով մտնում է Հայկական հողը, ավերում և ասպատակում Ծոփքը, Անգեղտունը, Անձիտը, Մզուրը, Դարանադի և Եկեղյաց գավառները, անխնայ զննչանում բնակչությանը, իսկ կանանց և երեխաներին գցում փղերի ոտքերի տակ գազանաբար տրորում, նստեցնում սայլերի ցցերին, գցում կամերի տակ և չարչարանքներով սպանում¹⁾:

Հայ Ժողովուրդը մեկ մարդու նման ոտքի է ելնում պաշտպանելու իր ազատությունը, իր անկախությունը, իր հայրենի հողը: Հայ ազատամենչ Ժողովուրդը առյուծ

¹⁾ Եվ մինչդեռ Հայոց Արշակ Թադավորն իր զորքերով զգուշաբար Ատրպատականի սահմաններում էր, որովհետև այնտեղ սպասում էր Պարսից զորքերին, նրանք՝ առաջնորդ ունենալով Մերուժանին՝ այլ կողմից էին ասպատակում Հայոց աշխարհը:

Որովհետև Պարսից Թադավոր Շապուհը անթիվ զորքերի բազմությամբ հորդահոս հեղեղի նման ասպատակելով սփռվում ու ծավալվում էր Աղձնիք, մեծ Ծոփք, Անգեղտան Անձիտ գավառ, Շահունյաց Ծոփք, Մզուր, Դարանադի և Եկեղյաց գավառների սահմաններով: Այրում էին (նրանք) ավերում և անթիվ մարդիկ սրի քաշում, կանանց և մանուկներին հանում էին սայլերի ցցերի վրա, մի մասին կամերի տակ գցելով կախում էին և բազմաթիվ աղամարդկանց գցում էին փղերի ոտքերի տակ: (Փավստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 141—142):

ծի կատաղությամբ, մինչև վերջին մարդը, մինչև վերջին շունչը կռվում է հարձակվող դադանի դեմ՝ դաշտերում, գյուղերում, քաղաքներում:

Երբ Շապուհի բանակները մոտենում են Հայոց նախկին մայրաքաղաք Տիգրանակերտին, Տիգրանակերտի ընակիչները իրենց հայրենի քաղաքի պաշտպանության ժամանակ, Շապուհի հարձակվող զերազանց ուժերի դեմ կռվում են մեծ հերոսությամբ, նրանց պատճառելով շատ մեծ կորուստներ: Տիգրանակերտի վրա կատարած մի քանի անհաջող հարձակումներից հետո, Շապուհ Վարադը ստիպված հետ է քաշվում Տիգրանակերտից Մծրին, ջարդված զորաբանակները կարգի գցելու և նոր ուժեր հավաքելու համար: Եթե Շապուհը գալիս է մեր Տիգրանակերտ քաղաքը՝ նրա դեմ են կանգնում քաղաքի մարդիկ և քաղաքապահ զորքը, որովհետև Սյունյաց Անտիոք (նույն Անդովկ Սյունին Վ. Հ.) նահապետը, որ Արշակի աներն էր և քաղաքի վերակացուն, հրամայեց քաղաքի դռները կողպել Շապուհի առաջ: Եւ ոչ միայն արգելեց մտնել, այլև ոչ պատգամավորներ ուղարկեց նրա մոտ, ոչ էլ նրա ուղարկածներին ընդունեց: Տեղի ունեցավ խիստ կռիվ, որի ժամանակ շատ պարսիկներ սպանվեցին—Շապուհի դուռը պարտություն կրելով՝ նորից Մծրին դարձավ¹⁾:

Շապուհը նոր թարմ ուժեր հավաքած երկրորդ մեծ արշավանքն է կազմակերպում դեպի Տիգրանակերտ: Բայց նրա կրած առաջին պարտությունը վախեցրել էր պարսից զորավարներին և նրանք աշխատում էին համոզել Շապուհին, որպեսզի նա հրաժարվի կռվի ճանապարհով Տիգրանակերտը վերցնելու իր մտքից և գլխի գիվանադրության միջոցին²⁾:

¹⁾ Մ. Խորենացի «Հայոց պատմություն» Ս. Մալխասյանի թարգմանություն, էջ 195:

²⁾ «Երբ զորքը հանգստացավ ու կրած նեղություններից կազդուրվեց Շապուհը կամեցավ Տիգրանակերտն առնել, բայց նրա առաջապահ զորքը և լրտեսները չթողին այս բանով զբաղվել»:

Շապուհ Վարադը զորահրամանատարներին խորհրդով գրում է այսպիսի մի թուղթ Տիգրանակերտցիներին՝ «Մաղկեզանց քաջ Շապուհ արքայից արքա, Տիգրանակերտցիներին, որ այլևս չէք հիշվելու արյաց և անարյաց մեջ»:

Ես կամենում էի ձեզանից սկսելով բոլոր առաջիկա քաղաքները մուտք գործել խաղաղությամբ և քաջին վայել արձականությամբ: Եւ եթե դուք, Տիգրանակերտցիներդ, որ առաջինն էք, ոչ թե քաջությամբ, այլ իմ ուղեորության ճանապարհի վրա, ինձ հակառակ կանգնեցիք, մյուսներն էլ ձեզանից օրինակ կառնեն նույնպես վարվելու: Բայց իմ դարձի ժամանակ իմ բարկությամբ ձեզ այնպես կվնասեմ, որ նորից օրինակ կդառնաք խելացնոր ստանակներին»:

Շապուհի թուղթը, ինչպես և սպառնալիքները ոչ մի նշանակութուն չունեցան քաջ Տիգրանակերտցիների համար, նրանք նույնիսկ ծաղրեցին Շապուհի թեթևամտությունը:

Տեսնելով Տիգրանակերտցիներին համառությունը Շապուհ արքունարքուն հրամայեց պաշարել քաղաքը: Տիգրանակերտցիները, քաղաքը պաշարող պարսկական բանակների դեմ կռվում էին մեծ հերոսությամբ և ցած զցում պարիսպներին մոտեցող հազարավոր զինվորներին, իսկ երբ կռիվը մի փոքր դադար էր առնում, պարիսպների վրայից քաղաքացիները բղավում էին «հեռացի՛ր միզանից, Շապուհ, ապա թե ոչ քեզ առաջինից ավելի մեծ չարիքներ կհասցնենք»³⁾:

Շապուհը տեսնում է, որ զժվար է միայն պարսից ուժերով գրավել քաղաքը, ղիմում է հոռմայեցի զերիններին, խոստանալով ազատ արձակել նրանց, եթե նրանք կարողանան զրավել քաղաքը. «Եթե ձեր կռիվ-

³⁾ Մ. Խորենացի «Հայոց պատմություն», նույն տեղում:

⁴⁾ Մ. Խորենացի «Հայոց պատմություն», նույն տեղում, էջ 197:

լով այս քաղաքն առնեմ, ձեզ բոլորիդ կազատեմ ձեր ընտանիքներով հանդերձ¹⁾։

Հոռմեյիցիները մեծ ուժով և պարկապանք քանդելու գործիքներով հարձակվում են քաղաքի վրա. «Իսկ հույները ժողովով, մեծ ուժով պարսպին դեմ դրին էջ կոչված գործիքը։ Սա մի անվավոր մեքենա է, որ քշելով տանում են երեք մարդ։ Նրանց ներքուստ կան կացիներ, երկրաբանի սակրներ և սրածայր մուրճեր՝ հիմքերը փորելու համար, և այն պատերը, որ Հալկադյան Տիգրանը շինել էր հաստ և ամուր, հիմքից քանդելով, տապալելիցն, դանկրում և բոլոր կողմերում կրակներ վառեցին, և նեղում էին քարեր, նեղում և տեղեր²⁾։

Սկսվում է դաժան և արյունալի մարտը։ Տիգրանակերպացիները նույնիսկ քաղաք ներխուժած թշնամու դեմ կռվում էին մեծ քաջությամբ պարկապանների վրա, փողոցներում, բակերում և աներում, զենք էին վերցնում մինչև անդամ կտնայք, ծերունիներն ու մանուկները, սպանվածների հարյուրավոր և հազարավոր դիակներով փակվում էին քաղաքի փողոցները։

Տիգրանակերպի փողոցները և շենքերի հիմքերը լցվում են արյունով—«Բոլոր զորքը ներս մտավ, պարսկական ձեռքը չէր հոգնում, բազմախողտող սուրը արյունով հագեցնելուց, այնպես որ սպանվածների արյունով լցվում էին հիմքերը։ Իսկ հունական ձեռքը կրակի էր մատնում բոլոր փայտակերտ շինությունները³⁾։

Տիգրանակերպի առումը համազանց ծանր նստեց Շապուհ Վարադի բանակի վրա և դրա համար—արյունարու գազանը հրամայեց քաղաքը հիմնահատակ քանդել՝ չխնայելով նույնիսկ մանուկներին և ծերունիներին։

Տիգրանակերպի առումից հետո, պարսկական բանակները շարժվում են Հայոց մի շարք բերդերի վրա, բայց Շապուհին և Մերուժանին հաջողվում է դրավել միայն Դարանադյաց գավառի Անի բերդը, որտեղ

գտնվում էին հայ թագավորների գերեզմանները։

Պարսից Շապուհը և դաժան Մերուժանը գերեզմաններից հանել են ապին հայ թագավորների ոսկրները, Պարսկաստան տանելու համար, որպեսզի գրանով վերջ տրվի հայ Արշակունիների հիշատակին Հայաստանում։

«Եվ բազմաթիվ բերդեր թողնում էին որովհետև չէին կարողանում մարտնչել ամրությունների դեմ, բայց նրանց ձեռքն ընկավ միայն Դարանադյաց գավառի ամրոց Անի բերդը, որովհետև չարագործ Մերուժանը հնարամտությամբ խորամանկեց այն ամուր բերդը։ Բարձրացան վիր և կործանեցին նրա պարկապանները և իջեցրին բերդից անթիվ գանձեր և բաց արին հայոց առաջին թագավորների՝ քաջ զինվոր Արշակունիների գերեզմանները և տարան թագավորների ոսկրներն ի գերություն⁴⁾։

Հայոց Արշակ թագավորը և Վասակ սպարապետը, լուր ստանալով ավազակ թշնամու գաղտնությունների մասին, շարժում են Հալկադյան բանակները դեպի թշնամու գրաված գավառները—Վասակ Մամիկոնյանը շարժվում է դեպի Արարատյան գավառը։ Քաջ սպարապետի գլխավորած բանակը կազմված էր հայրենիքին և ժողովրդական գործին նվիրված, «միաբան» և «քաջասիրտ» զինվորներից, որոնք մեծ տանելությամբ էին լցված դեպի օտար նվաճողը և պատրաստ էին մինչև վերջին կաթիլ արյունը կռվել իրենց ընտանիքների, կանանց, երեխաների և հայրենի հողի պաշտպանության համար⁵⁾։

¹⁾ Փալստոս Բյուզանդացի «Պատմություն Հայոց», էջ. 143։

²⁾ «Ապա երբ այս լսեցին հայոց թագավոր Արշակը և նրա պորավոր Վասակը, իրենց զորքերին գորահանդես արին և գտան այն ժամանակ այնտեղ, Վասակ զորավորի ձեռքի տակ վաթսուն հազար ընտիր պատերազմողներ, որոնք միաբան և միասիրտ էին պատերազմական գործերի մեջ, և (պատրաստ էին) հասնել, մարտնչել իրենց որդիներին ու կանանց համար, իրենց աշխարհի բնակչության համար զոհել իրենց անձերը, մինչև ի մահ հասնել, մարտնչել իրենց սուրբ եկեղեցու պաշտամունքի, իրենց աստուծո անվան, հավատի համար, իրենց ընկե տերերի՝ Արշակունիների փոխարեն»։ (Փալստոս Բյուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 143)։

¹⁾ Մ. Պարենացի «Հայոց պատմություն», էջ 197։

²⁾ Նույն տեղում։

³⁾ Նույն տեղում։

Վասակ Մամիկոնյանը վախճուն հաղաթանոց բանակով հանդիպում է թշնամու գերազանց ուժերին, որոնք ըստ Փավստոսի՝ ծովի ափագից էլ շատ էին, Արարատյան դաշտում: Տաղանդավոր զորավարն իր քաջարի գնդերով նետվում է պարսկական բանակի վրա, հիմնովին ջախջախում և հետ խլում հայոց թագավորների սակերները: Միայն Շապուհ Վարդգին և դավաճան Մերուժանին է հաջողվում մի կերպ փախչել պատերազմի դաշտից¹⁾:

Հայ ժողովուրդը օտարների դեմ մղվող ազատագրական պատերազմներում մենակ չէր, նրան օգնում և օժանդակում էին Կովկասյան մյուս ժողովուրդները, որոնք զենք վերցրած Հայկական բանակներին հետ միասին դուրս էին քշում Կովկասի սահմաններից օտարերկրյա հրոսակախմբերին:

Արարատյան դավառի հաղթական հաղաթանոցից հետո, երբ Արշակը և Վասակը հաղթական արշավանք են կազմակերպում դեպի Սարգստական, Պարսկական մնացած բանակները վերջնականապես ջախջախվում համար, Վասակի կոչով Հայկական

բանակին միանում են ալանները, հոնքերը և Կովկասյան մյուս ճնշված ժողովուրդները՝ որոնք թավրեշի ճակատամարտում, հայերի հետ կողք կողքի, կռվում են մեծ քաջությամբ և պարտության մատնում Շապուհի բանակներին²⁾:

Շապուհ արշունարբուն իր գլխավորած մեծ արշավանքների ճախողումից և թավրեշի ճակատամարտից հետո պարսկական անվանի զորավարների հրամանատարությամբ կազմակերպում է հատուկ բանակներ և մեկը մյուսի հետևից ուղարկում Հայաստան: Սկսվում է Հայպարսկական երկարամյա արշունալից և դաժան պատերազմների նոր շրջանը: Մի շարք տարիների ընթացքում Պարսկաստանի կողմից գերազանց ուժերով ավելի քան քսան երեք մեծ արշավանքներ են կազմակերպվում դեպի Հայաստան, բայց բոլոր արշավանքներն էլ թշնամու համար մեծ կորուստներով հետ են շփրտվում: Զորքերը դարձնում են անվանի պատմիչ Փավստոս Բուզանդը, իր «Պատմություն Հայոց» աշխատության մեջ մանրամասն նկարագրել է պարսիկների բոլոր արշավանքները և հայոց քաջ սպարապետ

1) «Ապագորք ժողովեց Հայոց թագավոր Արշակը, և կուտակեց իր մատ քաղմաթիվ զորքեր, ափաղի պես քաղմաթիվ, և արշավեց Պարսից աշխարհի վրա. ապա Վասակը Հայոց գունդը վերցնելով և հոնքերն ալանների հետ միասին օգնականության կանչելով, հասավ օգնության Հայոց թագավորությանը, ընդդեմ պարսից... Բայց որովհետև Պարսից թագավորն իր ամբողջ զորքերով հենց նույն ժամանակ արշավում էր Հայաստան աշխարհը սրանց վրա, ուստի սրանք շտապելով հասան Սարգստական և թավրեշում դուրս Պարսից թագավորի զորքերին բանակ դրած:

Հասավ սպարապետ Վասակը երկու հարյուր հազարով հարձակվեց պարսից բանակի վրա: Թագավորը ճողողրեկով միաձի փախավ նվաճարի առան Պարսից ամբողջ բանակը և պարսից ամբողջ զորքի բազմությունը կոտորեցին և անթիվ ավար վերցրին բանակից (Փավստոս Բուզանդացի «Պատմություն Հայոց», էջ 144):

1) «Ապա Վասակ սպարապետը վախճուն հազարով առաջ խաղաց, Մաբաց երկրի մի ամուր օւղում, թիկունքում թողեց Արշակ թագավորին, սպասավորներին հետ միասին: Եվ ինքը եկավ հասավ հայոց միջնաշխարհը Այրարատ դավառը: Եվ հասավ դառավ պարսից զորքերին, որովհետև հասել էին խոնավել քաղմությամբ ինչպես ափաղը ծովի ափին՝ բանակելով Այրարատ դավառի շուրջը:

Ապա հասավ Վասակը իր հետ եղած գնդերով գիշերվա անապատելի ժամին ընկավ Պարսից թագավորի բանակի վրա: Եվ այստեղ անխտիր սրի քաշեցին պարսից բոլոր զորքերին... (Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 144):

Վասակ Մամիկոնյանի կազմակերպած հե-
րոսական զինադրույթյունը:

Թեպետ պատմիչը որոշ զեպքերում,
ինչպես պարսկական աշնակն էլ Հայկական
դորքերի քանակը տալիս է մեծ չափազան-
ցություններով, հասցնելով աշն նույնիսկ
միլիոններին, բայց շարադրանքից մեզ համար
հիմնականում մեկ բան է պարզվում, որ բոլոր
հակառակադրույթներում էլ պարսկական դորքերի
քանակը գերազանցում է հայկականին, որ
հայերը փոքր, բայց կազմակերպված բա-
նակներով անհրաժեշտ հակահարված էին
տալիս օտարերկրյա թշնամուն:

Պարսկա-հայկական երկարամյա պա-
տերազմի առաջին մեծ արշավանքի համար
Պարսից Շապուհ Վարադը կազմում է 600
հազարանոց բանակ, և Պարսկական անվա-
նի Վին զորավարի առաջնորդությամբ ու-
ղարկում Հայաստան: Հայկական զորաբանակ-
ները ջախջախում են պարսկական հրոսա-
կախմբերին և հետապնդում նրանց մինչև
պարսկական սահմանը:

Վին զորավարի զորաբանակի ջախջա-
խումից հետո գալիս է Պարսկաստանում
հռչակ ստացած Անդեկան զորավարը 400
հազար զորքով, որը հարձակվում և ասպա-
տակում է Հայաստանի մի շարք գավառները:
Վասակ սպարապետը 12 հազարանոց փոք-
րաթիվ, բայց հայրենիքի գործին նվիրված
բանակով, նետվում է թշնամու բանակի
վրա, հանկարծակիի բերում նրանց և ամ-
բողջովին ոչնչացնում Անդեկանի բանակը:
Հայկական փոքրաթիվ բանակի մեծ հաղ-
թանակի լուրը կայծակի արագությամբ
հասնում է Պարսկաստան: Անդեկանի բազմա-
հազար բանակի խայտառակ սպարապետ-
նից կատաղած Շապուհ Վարադը կազմում
է մի նոր ավելի մեծ զորաբանակ Պարսիկ
անվանի Հազարավախտ զորավարի գլխա-
վորությամբ և սեղարկում Հայաստան:

Հազարավախտ զորավարը, որը Աղծ-
նյոց երկրից ցանկանում է պատերազմա-
կան գործողությունները ծավալել ամբողջ
Հայաստանում, առաջին իսկ հակառակադ-
րում կորցնում է իր գլուխը, իսկ նրա զո-
րաբանակները բռնում են անկարգ նահան-
ջի հանապարհը:

Հայաստանի վրա արշավող 900 հազա-
րանոց պարսկական նոր բանակը գլխավո-
րում է Կալոսական անվանի առնմից Դմա-
վանդ Վսեմականը, որի հրոսակախմբերի
զեմ նորից իր անվեհեր զինվորներով կովի
է դուրս գալիս Վասակ Մամիկոնյանը: Այս
կովում Դմալանդ Վսեմականը կորցնում
է իր զորաբանակի մեծ մասը և ինքը
գլուխը խոնարհում Վասակի սրի առաջ:

Վահրին զորավարը իր նախորդների
անփառունակ մահը տեսնելով և Վասակ
սպարապետին չժողացվող դաս տալու հա-
մար կազմում է միլիոնանոց բանակ և ար-
շավում դեպի Հայաստան: Վասակը Վա-
րինին ծաղրելու համար միայն 40 հազա-
րանոց բանակով է դուրս գալիս նրա դեմ:
Հակառակադրույթ տեղի է ունենում Մախա-
ցեան կոչված վայրում: Արշունալի և դա-
ժան կովում Պարսիկները թողնում են հար-
յուր հազարավոր սպանվածներ ու վիրա-
վորներ և գլուխները կորցրած նահանջում
Պարսկաստան:

Պարժենկոտ Գուժանդ Շապուհը Պար-
սից Շապուհ Վարադից խնդրում է 900.000
զորք հայոց աշխարհը հիմնովին քանդելու
համար: Վասակ սպարապետը մոտիկից ծա-
նոթ լինելով Գուժանդ Շապուհին և նրա
զինվորական ունակություններին, թողնում
է, որ այդ պարժենկոտ զորավարն առանց
զինադրույթյան մանի հայկական սահմա-
նային գավառները Գուժանդ Շապուհը
միամտաբար խորանում է Հայոց երկրի ներ-
սը, մտածելով, թե բավական է եղել իր քաջ
անունը, որպեսզի հայկական դորքը գլուխը
կորցրած նահանջի: Բայց ի զարմանս
Գուժանդ պարժենկոտի, երթաշարքով անց-
նող պարսկական բանակի թևերից և թի-
կունքից հանկարծակի հարձակվում են Վա-
սակ Մամիկոնյանի փնդերը և անխնա հար-
վածում հարձակուձից խուճապի մասնված
պարսից զորքին: Գուժանդ Շապուհը ընկ-
նում է հակառակադրում, իսկ գավառան
Մերուժանը, որ առաջնորդում էր պարս-
կական բանակին, այս անգամ ևս կարողա-
նում է գլուխն ազատել Վասակի սրից:

Պարսից արքան կազմում է նոր զորա-
բանակներ, որոնք «անշափ և անթիվ» էին

«իրիւ գաւաղ առ ամին ծովում և Դեհկան Նահապետի գլխավորութեամբ ուղարկում Հայաստան: Դեհկանը նույնպէս պարտութեան է մատնւում և գլուխը խոնարհում քաջ սպարապետի սրի տուաջ:

Չեն դադարում պարսկական բանակները արշավանքները դեպի Հայաստան: Կադմում և պատրաստում են նորանոր ընտիր զորագնդեր, որոնք անթիվ փղերով և մեծ պատրաստութեամբ հարձակւում են հայոց երկրի վրա: Ընտիր զորաբանակները հրամանատար Սուրեն Պահլավը մեծ հույս է ունենում, որ նոր արշավանքների ժամանակ կկարողանա բռնել Վասակին և նրա գլուխը նվեր ուղարկել իր Շապուհ արաքային: Սակայն կովի դաշտում իր գլուխն է հանձնում Վասակին: Անվանի զորաւար Վասակ Մամիկոնյանի 30 հազարանոց քաջարի բանակի մահացու հարվածներից հոդմացրիվ են լինում պարսից ընտիր զորաբանակները և կովի դաշտում ընկնում է նրանց հրամանատար Սուրեն Պահլավը:

Պարսից Վսեմական զորաւարի արշավանքը նույն տխուր վախճանն է ունենում ինչ որ Սուրեն Պահլավին:

Պարսիկ Զիկ Նվիրակապետը նախաձեռնում է մեծ արշավանք դեպի Հայաստան բազմաթիվ վարժված զուժարտակներով, բայց սա նույնպէս իր գերեզմանն է դառնում Հայաստանում:

Դեպի Հայաստան է արշավում Սուրեն Պարսիկը վեց հարյուր հազարանոց բանակով: Վասակը նրանց դեմ դուրս է բերում միայն 10 հազար զինվոր: Տաղանդավոր սպարապետը լավ տիրապետում էր թշնամու գերազանց ուժերի դեմ կռիւլու զինվորական արվեստին: Այս անգամ թշնամու վրա հարձակւումը նա սկսում է խորը գիշերին: 10 հազարանոց հայկական բանակը գիշերով մեծ զգուշութեամբ մտնում է քնած թշնամու ճամբարը, մեծ աղմուկով, գոռում-գոչումով արթնացնում պարսից զորքին և սկսում անխնա ջարդ տալ շփոթված, քունը գլխների պարսիկներին: Թշնամին խուճապահար գիւժում է փախուստի, բայց նրանցից ոչ մեկին չի հաջողւում ազատվել մարտի դաշտից: Սուրեն Պարսիկ բանակը գլխովին ջախջախւում է, իսկ գե-

րի ընկած զորաւարը շղթայակաղ ուղարկւում է Արշակ թագաւորին:

Մեծ ուժերով հարձակւող պարսկական անվանի զորաւար Հրեվշոգումի ինն հարյուր հազարանոց բանակը չդիմանալով Վասակի հասցրած մահացու հարվածներին գլուխը կորցրած փախչում է Պարսկաստան:

Հրեվշոգումից հետո դալիս է Շապուհ Վարդի տաջ մշտապէս պարծեցող Աղանայոզան զորաւարը, բայց նա նույնպէս խայտառակ պարտութեան է մատնւում Վասակի կողմից:

Պարսից մեծ նախարար Բոյեկանը հարձակւում է Վասակի բանակի վրա՝ մեծ հույս ունենալով իր գերազանց ուժերի վրա: Վասակը Բոյեկան նախարարին ճակատամարտ է տալիս Ատրպատականի Թավրիզում, որտեղ ընկնում է Պարսից մեծ նախարարը, իսկ նրա զորքի մնացորդները անկարգ նահանջում են Պարսկաստան:

Վասակը Թավրիզում այրում է Պարսից թագաւորի ապարանքը, որտեղ և գտնւում է Շապուհ թագաւորի նետահար եղած պատկերը: Լուր ստանալով Պարսից Վաչագան զորաւարի հարձակման մասին՝ Վասակ սպարապետը Արշակ թագաւորին թողնում է Դաբլունայ ամուր բերդում և արշավում Վաչագան զորաւարի 180 հազարանոց բանակի կողմը, հիմնովին ոչնչացնում նրանց և սպանում Վաչագան զորաւարին:

Մշկան պարսից զորաւարի գեմ մղած համառ կռիւներում Վասակին հաջողւում է հաղթել Պարսկական զորքին և դուրս քշել նրանց Հայկական երկրի սահմաններից:

Դավաճան Մերուժանի առաջնորդութեամբ Մարին մեծ նախարարի վեց հարյուր հազարանոց զորաբանակները մտնում են Հայաստան, բայց սրանք նորից հաջողութուններ չեն ունենում, Վասակի տված ջարդից միայն Մերուժանն է կարողանում գլուխն ազատել: Հարձակւում է Զինդկապետը: Վասակ Մամիկոնյանը Հայաստանի բոլոր կողմերից նոր ուժեր է հավաքում թշնամու գերազանց ուժերին հակահարված տալու համար: Նա տեսնում է թշնամու ուժերի բացարձակ գերազանցութունը, հայկական զորքի փոքրաթիվ զնդերի նկատ-

մամբ և մշակում թշնամուն ոչնչացնելու իր գիշերային հարձակման պլանը: Ձինդկապետ զորավարը իր ինն հարյուր հազարանոց բանակով երևում է Ասորպատականի սահմանագլխում: Վասակի մշակած գինվորական խաղի համաձայն՝ հայերը հետանում են սահմանգլխից մի փոքր հեռու և թույլ տալիս, որպեսզի թշնամին իր խփած ճամբարում հանգստանա: Գիշերը, երբ թշնամին խորը քնի մեջ է լինում, Վասակ սպարապետի կարիչներն իրենց քաջ զորավարի առաջնորդությամբ մտնում են ճամբարը և անխնա հարվածում թշնամուն բոլոր կողմերից: Խեղճ Ձինդկապետը բախտ չի ունենում նույնիսկ արթնանալու:

Պարսիկ Սակասան հանդերձապետի դուրսբանակը նույնպես ոչնչացվում է Վասակ Մամիկոնյանի գլխավորած հայ նախարարական բանակների կողմից:

Հանդերձապետի բախտին է արժանանում նաև տակառապետ Շապուտանի բանակը:

Իսման ու արյունալի Մաղխազյան մեծ ճակատամարտում Վասակը հաղթում է պարսկական մի նոր ութ հայրուր հազարանոց բանակի, սպանում նրա զորավար Մուսայի հանդերձապետին:

Վասակ զորավարը Հայկական 10 հարյուր ընտիր զորքով գիշերային հարձակման ժամանակ ոչնչացնում է Պարսից արքայի մի նոր 900 հազարանոց բանակ, որը եկել էր արքայի համբարապետի գլխավորությամբ:

Իսլիս են պարսկական նոր զորազնդեր հռչակավոր մեծ զորավար Մուսիկանի գլխավորությամբ: Հայկական բանակներն ընդունում են պարսից զորավարի մարտահրավերը և ոչնչացնում նրա գնդերը: Շապուտ Վարազդ տեսնում է, թե ինչպես Հայկական քաջարի բանակներն իրենց թագավորի և ժողովրդի համար կռվում են մինչև վերջին շունչը, գիմազքում են Պարսկական գերազանց ուժերին առյուծի կատաղությամբ, և պաշտպանում են իրենց հայրենի հողը մեծ անվերջություն, որ հայկական կաղնակերպված քանակը իր առդանդավոր սպարապետ Վասակ Մամիկոնյանի

շնորհիվ շատ ու շատ փայլուն հաղթանակներ է տանում պատերազմի երկար տարիների տասնյակ ճակատամարտերի ընթացքում, որ իր կաղնակերպած բոլոր արշավանքները իդուր են և չեն կարող հայկական քաջարի բանակների գիմազքով յուսել կտրել ու հայոց աշխարհին ծունկի բերել, որ գնդի ուժով ալլա տվելորդ է Արշակի կամ Վասակի հետ խոսել: Պետք է նորից գիմել գիվանագիտական խորամանկությամբ ելնա գիմում է գիվանագիտության նոր կեղծ միջոցների: Շապուտը աղերսող հրովարտակներ է ուղարկում Հայոց Արշակ թագաւորին, խնդրելով վերջ տալ սկսված պատերազմին և վերականգնել խաղաղությունն ու բարեկամությունը երկու պետությունների միջև¹⁾:

Արշակը և Վասակը լավ գիտակցում էին Շապուտ Վարազի մտադրությունը և ձգտում էին պատերազմը շարունակել մինչև թշնամու վերջնական ջախջախումը, բայց հայ միջնաշխարհում ստեղծված ներքին դրությունը թույլ չէր տալիս իրականացնել այդ միտքը:

Պարսիկների դեմ երկար տարիներ մղվող կռիվներում Հայաստանը դարձել էր պարսկական և հայկական զորաբանակների ուղղադաշտ: Երկար տարիների պատերազմների ծանր հետևանքները արդեն զգացնել էին տալիս իրենց երկրի ներսում: Ավերված գյուղեր և քաղաքներ, ամուլայացած դաշտեր, հարյուրավոր և հազարավոր գաղթականներ, ընդհանուր հոգնածություն և դժվարություններ ու սով այս բոլորը թերևս հնարավոր լինեին տանել, եթե երկրի ներսում նորից ծայր առած չլինեիր մի շարք նախարարական տնկրի դավաճանական ապստամբություններ, ու

¹⁾ «Ապա Պարսից արքա Շապուտը մեծ տղաշանքով, նվիրենքով և հրովարտակներով և սիրով իր մոտ կանչեց Արշակին, որպեսզի սրանից հետո իրենց մեջ սեր, խաղաղություն և մեծ բարեկամություն ստեղծեն» (Փալստոս Բուզանդացի, «Պատմություն Հայոց», էջ 158):

րոնք երկրի ծանր օրերին դավաճանելով ժողովրդին և ժողովրդական գործին, խմբերով անցնում էին թշնամու կողմը և կազմում Արշակի, Վասակի բանակներին զեն, թիկունքից հարվածում ժողովրդական բանակներին: Հայ երկիրը նման էր ալեկոծված ծովի, որի ահեղ ալիքների զեն ալիս չէր կարող կռվել Արշակի և Վասակի ֆեոդալական խմբերը — հարկավոր էր մտածել այդ նախընտրելի նավահանգիստ հասցնելու մասին:

«Երեսուն և չորս տարի պատերազմեց Հայոց երկիրը Պարսից թագավորի դեմ, որից հետո երկու կողմերն էլ հողանցին, լքվեցին, պարսիկներն և սկսեցին ցրվել հայոց թագավորի բանակից, թողին իրենց արքա Արշակին: Այս դավաճանությունն սկիզբը դրին մեծամեծ ալիքանիւնները, նախ ըզեղին Աղձնեաց և Նոշիրական ըզեղիք և Մահկերտան և Նիհորականի և Բասրնաթի և Աղձնյաց ողջ նախարարությունը և ազատամբեցին հայոց արքայից Աղձնյաց տոհմն ու զորքը և գնացին Պարսից արքա Շապուհին մոտ, և Հայաստանի կողմից պարսիկ կառուցեցին, որը Ջորա են կոչում, դռներ դրին և անշատեցին իրենց աշխարհը Հայաստանից:

Եվ սրանից հետո Բուզարաց ըզեղիք, սրանից հետո Ջոր գավառի տերը և Կոզր գավառի տերը, և նրանից հետո Գարգամաճորի տերը, և նրանք, ովքեր մոտ էին և սահմանակից նրանց, առանց բացառության ազատամբեցին Հայոց թագավոր Արշակից և անցան, գնացին միացան Պարսից թագավոր Շապուհին: Ազատամբեցին Հայոց թագավոր Արշակից (նաև) Արցախ և Տմուրիք անառիկ գավառները և Կորդվաց անմատչելի աշխարհը, ապա գնաց ու միացավ Պարսից թագավորին նաև Կորդվաց գավառի տերը¹⁾:

Ազատամբած և դավաճանաբար Պարսկական թագավորին ծառայություն գնացած նախարարական տների հետ Արշակի դեմ էին կանգնել նաև այն նախարարական տները, կուսակալներն ու գավառատերերը, ու

րոնք այս կամ այն պատճառով դեռ շարունակում էին մնալ Արշակի բանակում:

Ներսես մեծի մոտ գումարված հայ մեծամեծների ժողովում, Արշակի բանակում դեռևս մնացած նախարարները, կուսակալները և գավառատերերը Պարսկաստանի դեմ մղվող պատերազմը համարելով Հայոց թագավորի և սպարապետի մասնավոր մի գործ, վերջնականապես հրաժարվում են Արշակին և Վասակին օգնել և օրինակ վերցնելով դավաճան նախարարներից, որոշում են ենթարկվել պարսից Շապուհին և ոչ թե շարունակել պատերազմը:

«Ապա հավաքվեցին Հայոց ամբողջ աշխարհի թագավորություն մարդիկ և եկան Հայոց մեծ եպիսկոպոսապետ Ներսեսի մոտ: Մեծամեծ նախարարները, կուսակալները, կողմնակալները, գավառատերները, զործակալներն ու շինականների տանտապետները հավաքվեցին մի տեղ և սկսեցին խոսել Ներսեսի հետ և ասացին. «Դու, աչք, ինքդ էլ գիտես, որ այս մեր թագավոր Արշակի երեսուներորդ տարին է, որ ոչ մի տարի չենք հանգստացել պատերազմից, և միայն սրով, սուսերով, նետով ու նիզակների տեղերով ենք սրբել մեր երեսների քրտինքը: Բայց այլևս անկարող ենք դիմանալ և մարտ տալ, ավովհետև ավելի լավ է՝ մենք ծառայենք պարսից թագավորին, ինչպես արեցին մեր ընկերները, որ թողեցին նրան (Արշակին) և գնացին Պարսից թագավորի մոտ և մենք էլ նույն ձևով կվարվենք որովհետև այլևս անկարող ենք կռվել:

Եթե Արշակ թագավորը կարիք ունի կռվելու Շապուհի դեմ, թող կռվի Վասակի և իր աներ Անդոկի միջոցով: Հայոց այս աշխարհից այլևս ոչ մի տղամարդ չի գնալու նրան օգնություն ու պաշտպանություն: Եթե պետք է նրան, թող պատերազմի, եթե ոչ մեր փուլից չէ, մենք թողել ենք նրան»²⁾:

Արշակի համար դժգոհ էր այլևս կռվել երկու ուժերի՝ մի կողմից ներսի նախարարական տների, իսկ մյուս կողմից զրսի

¹⁾ Փալստոս Բուզանդացի «Պատմություն Հայոց», էջ 159:

²⁾ Փալստոս Բուզանդացի «Պատմություն Հայոց», էջ 161:

թշնամու՝ պարսիկների դեմ: Նրան հարկավոր էր մի փոքր դադար՝ ներսի ուժերը սանձելու և նոր բանակներ կազմակերպելու համար. մանավանդ երբ Շապուհ Վարազը խաղաղություն էր խնդրում, հարկավոր էր օդապարծել մտենալը, ուստի անկախ իր և Վասակի ցանկությունից, Արշակը համաձայնություն էր ապրիս խաղաղության դաշնադիր կնքելու:

Խորամանկ Շապուհը բարեկամական նոր հրավերներ է սարքում և Արշակ թագավորին տեսակցության կանչում՝ հավիտենական դաշինքի համար:

Արշակը հավատարմով Շապուհ Վարազի տված մեծ երդմանը, որը ուղարկել էր Արշակին (ազ՝ կնքված Վարազի նկար ունեցող մատանիով), Վասակ սպարապետի հետ միտախնդրում է Շապուհ Վարազի մոտ: «Ապա սրանից հետո կրկին (պատգամավորներ) ուղարկեց Պարսից արքա Շապուհը Հայոց արքա Արշակին և ասաց. եթե մենք համաձայն ենք միմյանց հետ, արի տեսնենք իրար և այսուհետև հայր ու որդու նման լինենք միմյանց հանդեպ: Իսկ եթե դու չտեսնես ինձ (ուրեմն) պատերազմ ես փնտառում իմ և քո մեջ: Իսկ Արշակը հավատարիմ ուխտի երդում էր պահանջում նրանից, որպեսզի զբանից հետո առանց կասկածի գնա նրա մոտ: Եվ նա բերել տվեց համաձայն Պարսից թագավորության հավատարիմ երդման կարգերի՝ վարազադրոշմ մատանիով կնքված ազ և ուղարկեց (Արշակին): Որպեսզի եթե այն երդումից հետո դարձյալ չգա, պատրաստ լինի ճակատ ու պատերազմ տալու իրար դեմ: Իսկ երբ այն էլ տեսան և լսեցին Հայոց երկրի բոլոր մարդիկ, սախեցիներունացան իրենց թագավոր Արշակի վրա և շտապեցին, որպեսզի վեր կենա, գնա ներկայանա Պարսից թագավոր Շապուհին: Իրանից հետո կամա թե ակամա վեր կացավ Հայոց թագավոր Արշակը, վերցրեց իր հետ իր դայակ՝ Հայոց զորավար սպարապետին և շարժվեց գնաց Հայոց երկրից Պարսից երկիրը պարսից արքա Շապուհի մոտ»¹⁾:

Հայոց Արշակ թագավորին և սպարապետ Վասակ Մամիկոնյանին նախկին ընդունելությունների նման ընդունելություն ցույց չի տրվում Պարսից արքունիքում: Խաբված Հայոց թագավորի և սպարապետի հետ ուխտադրութ Շապուհը՝ ուրանալով իր տված մեծ երդումը, վարվում է որպես հպատակների հետ: Եւ նույնիսկ պարսից արքայի անամոթությունն այնտեղ է հասնում, որ մեկ օր չդիմանալով Արշակի հանդիմանություններին հրամայում է շղթայել նրան և փակել Անդամըշում կամ Անհուշ բերդում մինչև նրա մահը: Իսկ Հայոց քաջ սպարապետ Վասակ Մամիկոնյանին, որը տարիներ շարունակ ջարդել, ոչնչացրել էր պարսկական հրոսակախմբերին, ծունկի էր բերել Պարսից բոլոր անվանի զորավարներին և մի քանի անգամ խայտառակ պարտություն մատնել Շապուհ Վարազի իր գլխավորած բանակներին, իր մոտ կանչելով ցանկանում է ցույց տալ իր ամենազորությունը նրա հանդեպ, կարծելով թե խաբերալությամբ իր մոտ կանչած և զինաթափած Հայոց քաջ սպարապետին կկարողանա կյանքում գոնե մեկ անգամ տեսնել խեղճացած և իրենից կյանք խնդրելու վիճակում: Բայց ի զարմանա Շապուհի, Վասակ Մամիկոնյանը մինչև անգամ ամենազոր դատավորի առաջ մեռավ է կանգնած նույն խրոխտությամբ, քաջությամբ և համարձակությամբ, ինչպես սովորաբար լինում էր բոլոր հաղթական ճակատամարտերից հետո. Շապուհ Վարազի սպառնալից այն խոսքերին, թե «քեզ աղուեսի մահով կպանեն» Վասակ Մամիկոնյանը մեծ զորավարին հատուկ սառնություն և արհամարհելով մահը պատասխանում է «մի ժամանակ առյուծ էի քեզ համար, իսկ այժմ իմ մարմնի փոքրությունը նայելով աղվես ես ասում, մինչև ես Վասակն էի, հսկա էի մի ոտքով քեզ՝ Պարսից ամենազոր արքա Շապուհիդ էի ճգնում, իսկ մյուս ոտքով Հոռմահան աշխարհակալ կայսրին»:

Քաջ սպարապետի համարձակ և անբասկալի պատասխանը շնչեցնում է Շապուհ Վարազին, որը մեծ հույս էր դրել իր վերջին ճակատամարտի վրա, որտեղ պետք է

¹⁾ Փափասու Բուզանդացի «Պատմություն Հայոց», էջ 164:

ծածկեր իր տասնյակ տարիների խայտառակ պարտութունները քաջ զորավարի միայն մեկ «ներք» խոսքով, բայց ինչպես և մյուս բոլոր ճակատամարտերում, Շապուհը խայտառակ պարտութուն է կրում այստեղ էլ՝ նա կատաղած հրամայում է մորթազերծ անել քաջ սպարապետին. մորթու մեջ խոտ լցնել և ուղարկել Անհուշ բերդը Արշակ թագավորին:

«Մյուս օրն ևեթ հրաման տվեց Շապուհն արքան իր առաջ բերել մեծ Հայքի սպարապետ զորավար Վասակ Մամիկոնյանին. սկսեց տանջել նրան, և որովհետև Վասակը մարմնով փոքր էր, Պարսից Շապուհն արքան ասում է նրան. աղվես, դձև էիր այն խանգարիչը, որ այսքան չարչարեցիր մեզ. դձև էիր, որ այսքան տարիներ կոտորեցիր արիներին. էլ ի՞նչ պիտի անես. աղվեսի մահով կսպանես քեզ:

Իսկ Վասակը պատասխան տվեց և ասաց. այժմ դու տեսնելով ինձ մարմնով փոքրիկ, իմ մեծության չափը չհասկացար, մինչև այժմ քեզ համար ես առյուծ էի, իսկ այժմ աղվես: Բայց երբ ես Վասակն էի, ես հսկա էի. իմ մի ոտս մի լեռան վրա էր և մյուս ոտս մի (այլ) լեռան վրա, երբ հենվում էի աջ ոտիս վրա, աջ լեռն էի գետնին հավասարեցնում, երբ ձախ ոտիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետնին հավասարեցնում: Ապա հարցրեց պարսից թագավոր Շապուհը և ասաց. դե հասկացրու ինձ ովքեր են այն լեռները, որոնց դու հողին էիր հավասարեցրում. եվ ասաց Վասակը «երկու լեռներից մեկը դու էիր, և մյուսը Հունաց թագավորը»:

Ապա Պարսից թագավորը հրաման տվեց մորթել Հայոց զորավար Վասակին և մորթը հանել ու խոտով լցնել և տանել

նույն բերդը Անդժըշ, որ Անհուշ են կոչում, ուր բանտարկեցին նաև Արշակ թագավորին¹⁾:

Վասակ Մամիկոնյանը իրեն ամբողջ կյանքում կռվել է հայ ժողովրդի ազատության, նրա անկախության, ինչպես և Հայկական ամուր պետականութուն ստեղծելու համար, նրա ղեկավարութեամբ տասնյակ տարիներ հայ զորաբանակները կռվել և ջախջախել են օտարերկրյա ավաղակախներին: Նրա շնորհիվ ինչպես արևելքում նույնպես էլ արևմուտքում օտար նվաճողները զգացել են և տեսել են հայկական դեմքի ուժը հայկական զինվորների չտեսնելի քաջութունները և ամբողջ հայ ժողովրդի ազատատենչ ուրին, օտար նվաճողների նկատմամբ ունեցած մեծ ատելությունն ու անկախության ձգտումը:

Վասակը չէր խնայում թշնամուն և նա ներումն էր խնդրում թշնամուց: Նա նույնիսկ արյունարբու Շապուհի առաջ չխոնարհեց գլուխը, այլ պահեց իրեն ինչպես հպարտ բազեն հայկական բարձր լեռներում: Շապուհն Վարդը Վասակի սպանությամբ չկարողացավ Հայաստանը ենթարկել իրեն և զինաթափ անել հայ զորաբանակներին: Հայ ժողովուրդը ավելի մեծ ատելություն է լցվում դեպի նենպափոր օտարերկրյա թշնամին և Վասակի արժանավոր դավաճ քաջ Մուշեղ Մամիկոնյանին Հայոց զորքերի սպարապետ կարգելով՝ նոր ուժեր է կազմակերպում Հայոց աշխարհի պաշտպանության համար:

¹⁾ Փավստոս Բուզանդացի, «Պատմութուն Հայոց», էջ 168—169:

